(Աղմկալի ծափակարություններ) :

Մեղանում քիչ չեն բազմացել այնպիսի մարդիկ, յես
նրանց կանվանելի պանդոմորալիստներ, վորոնք կուռակ-
ցության անդամների մեջ տեսնում են միայն բացասական
կողմից, վորոնք չեն ցանկանում տեսնել ու գնահատել աշ-
խատողի ամբողջ կյանքի ուղին, իմանալ նրա արժանիքներն
ու թերությունները: Այդ մարդիկ մարդուն գնահատում են
վորովհս մեկընդիւսու կազմակըրպած, անշարժ մեռած
սեմեմա:

Այդ մարդիկ հանդիսանում են «հոտալունների» և սիսե-
մանների դյուտարարներ, սիսեմաններ, վորոնք այնուհետեւ
կերպավում են առանձին աշխատողների նկատմամբ՝ դա-
տելու համար—լա՞վն ե նա, թե վատը, տեղավորվո՞մ ե
սիսեմայի մեջ, թե վոչ: (Ծիծաղ) :

Այդ մարդիկ մոռանում են, վոր մեր ամբողջ աշխա-
տանքը սոցիալիզմի կառուցման ուղղությամբ, մեր ամբողջ
դաստիարակչական աշխատանքն ուղղված է մարդկանց գի-
տակցությունը վերափոխելու նպատակին: Նրա՛ համար ել
հենց գոյություն ունի մեր կուռակցությունը, նրա՛ համար
ել հենց մենք հասել ենք սոցիալիզմի հաղթանակներին,
նրա՛ համար ել հենց մենք դնում ենք կոմունիստական շի-
նարարության խնդիրները, վորպեսզի վերափոխենք մարդ-
կանց, նրանց դիտակցությունը: Յեթե վոմանք կարծում
են, թե մարդկանց դիտակցության վերափոխումը չի վերա-
բերում կուռակցության անդամներին, թե կոմունիստներն
ի ծնե ազատ են ամեն տեսակ նախաղաշարմունքներից և
բացարձակակես կարիք չեն գգում վորեն վերագաստիա-
րակման, ապա դա վոչ այլ ինչ ե, քան իդեալիստական,
սիսեմատիկ հայցը մարդկանց նկատմամբ: Այդպիսի մո-
տեցումը դեպի մարդը, յերբ նրա մասին դատում են
աբորտական կերպով, նախապես պատրաստված չափանի-
չով, և նրան չեն ուսումնասիրում բոլոր կապերի ու միջ-
նորդականությունների մեջ,—դատապարտում և պասի-
վության, մարդկանց պեսսիմիստորեն զնահատելու: Այդ-
պիսի պեսսիմիստական մոտեցումն ուղղված է դեսպի անցյա-
լը: Դեպի մարդկանց գնահատումն այլպիսի մոտեցումն
ընդհանուր վոչինչ չունի բոլչեկիզմի հետ: Իր մեթոդու-
թիայով այն խորապես թշնամի յե բոլչեկիզմին:

ինձ թվում ե, վոր այս ամենը մենչելիքմի ուղղիղիվն է, կենդանի մարդկանց վերաբերմամբ ուղորտունիզմի յուրատեսակ մի ձև, յերբ յելում են վոչ թե այն բանից, վոր մարդուն առաջ տանեն, ուղղեն նրա թերությունները և վերադաստիարակեն, այլ հիպերտրոֆիայի յեն յենթարկում, ուղեցնում են մարդկանց թերությունները և մարդկանց մեջ չեն զանազանում այն արդեքալորը, վորն անհրաժեշտ ե զարգացնել, ամեն կերպ պաշտպանել: Իսկ յեթե մի փոքր քերենք այդ պսեղոմորախստներին, ապա կեղծ բարեպաշտներ ու կեղծավորներ նրանց մեջ կան վորքան ուղեք: Այդպիսի գերեզմանագողերի հետ, իհարկե, վոչ մի ապուր չես յեփի: (Յուրօն ծափահարությաւններ):

Դրա հետ միասին, անհրաժեշտ ե վերջ դնել կուսակցության վերականգնվող անդամների կիսատպուատ ուհարիւմացիայի սլրակտիկային: Մեզ մոտ սլրակտիկայում բարականաչափ լայնութեն տարածված ե կուսակցական աշխատողի այնպիսի տիպը, վորը հանուն վերապահովակըրման, «համենայն դեպս», պոչ կամ պոչիկ ե թողնում կուսակցության՝ ուհարիւմացիայի յենթարկվող անդամի կամ թեկնածուի վրա. յեթե մարդը վտարված ե յեղել, իսկ այժմ նրան պետք ե ուհարիւմացիայի յենթարկել, ապա նկատողություն են զրում նրան, թեև հայտնի ել չե, թե ինչի համար. յեթե նա նկատողություն ե ունեցել—ի ցույց են դնում, —այնպես, սաստելու համար: (Ծիծաղ):

Կիսատպուատ ուհարիւմացիայի այդպիսի պրակտիկային անհրաժեշտ ե վճռականորեն վերջ դնել և յեթե մարդն արժանի յե լիակատար ուհարիւմացիայի, ապա տույժը բոլորովին հանել նրա վրայից:

Այս փաստերից պարզ ե, վոր կենտկոմի հունվարյան պլենումի վորոշումը, —պլենումի, վորը մատնանշեց դիմակալորված թշնամիներին մերկացնելու ու մինչև վերջ բնածինջ անելու անհրաժեշտությունը, վորոնք սողոսկել են մեր շարքերը և ճգնում են զգաստության մասին կեղծ աղաղակներով կուսակցությունից թաղյունել իրենց թշնամությունը, —մի շարք կաղմակերպություններում կիրառվում և դեռ վոչ բավարար չափով վճռականորեն:

Կուսակցության անդամների նկատմամբ անհատական մոտեցման մեջողը դեռ լիովին վերականգնված չե: Հախուռն, անհիմն վտարումները կուսակցությունից՝ դեռ տեղի ունեն:

Կենտկոմի հունվարյան պլենումի վորոշումը նկատի ուներ ստեղծել առավելագույն յերաշխիք չհիմնավորված վտարումների գեմ պայքարելու համար, լիովին վերականգնել անհատական մոտեցումը, բացառիկ ուշազրություն ցուցաբերել դեպի կուսակցության անդամների բախտի հարցերը:

Նկատի ունենալով այլ հարցերի բացառիկ նշանակությունը, անհրաժեշտ ե կանոնադրությունը լրացնել մի շարք դրույթներով, վորոնք պետք ե ապահովեն ուշադիր մոտեցումը և կուսակցության անդամին ներկայացված մեղադրանքների հիմնավորվածության ուշի-ուշով քննումը. պաշտպանեն կուսակցության անդամների իրավունքներն ամեն տեսակ կամայականությունից և պրակտիկայից վերացնեն կուսակցության այն անդամների վերաբերմամբ, վորոնք չնչին զանցանքներ են կատարել, կուսակցությունից վտարում կիրառելը, վորը կուսակցական պատժի առավելացուն չափն ե հանդիսանում:

Անհրաժեշտ ե հիշել ընկեր Ստալինի ցուցումները.

«Կուսակցության անդամի համար կուսակցությունը դարձել ե շատ մեծ ու լուրջ գործ և կուսակցության անդամությունը կամ կուսակցությունից վտարվելը—այդ՝ մեծ բեկում և մարդու կյանքում»:

«Կուսակցության շարքային անդամների համար կուսակցության մեջ դանվելը կամ կուսակցությունից վտարվելը,—այդ՝ կյանքի և մահվան հարց ե»:

Ընկեր Ստալինը մեկ այլ տեղում մատնանշել ե, վոր կուսակցական պատժի առավելագույն չափը—այդ՝ վտարումն ե՝ կուսակցությունից, այնպես, ինչպես պատժի առավելացույն չափը բանակում հանդիսանում ե զնդակահարությունը: (Տես՝ Ստալին, «Ոլողիցիայի մասին» ժողովածու, եջ 34):

Համկ(ր)կ կենտկոմի 1937 թվականի փետրվար-մարտյան պլենումի և Համկ(ր)կ կենտկոմի 1938 թվականի

Հունվարյան պլենումի վորոշումները՝ կուսակցությունից կատարվող վտարումների հարցի վերաբերյալ՝ հանդում են հենց այն բանին, վոր կուսակցությունից վտարումները պետք ե հասցնել մինիմումի: Յեթև կուսակցությունից վտարումը հավասարագոր ե պատճի առավելագույն չափին՝ բանակում, այսինքն՝ գնդակահարության, ապա այն չի կարելի կիրառել աջ ու ձախ:

Անհրաժեշտ ե վերականգնել կուսակցական տույժի այն միջոցների գերը, վորոնք կուսակցության կանոնադրությամբ նախատեսված են զանազան տեսակի զանցանքների վերաբերմամբ: Զի կարելի բոլոր զանցանքների մասին դատել միևնույն կերպ, չբանաղանելով՝ կարևոր, թե չէին զանցանք և այդ: Կուսակցությունից վտարումները մի ժամանակ չառ կուսակցական կազմակերպությունների պրակտիկայում դարձել ելին մանր դրամ, իսկ կուսակցական տույժի այնպիսի միջոցներ, ինչպես՝ ի ցույց դնելը, կըշտամբանք հայտարարելը, զանցանքի մատնանշումը, նկատողությունը, խիստ նկատողությունը, խիստ նկատողությունը՝ նախաղդուշացումով, այսինքն՝ կուսակցական ներդորման միջոցների ամրող բավականաչափ ծկուն աստիճանացանքը, վորը նախատեսված ե մեր կանոնադրությամբ և համապատասխանում ե կուսակցական զանցանքների կազան տեսակներին ու զանազան աստիճաններին, — մոռացության եր տրվել:

Անհրաժեշտ ե վերականգնել կուսակցական դաստիարակության ու ներդորման այն միջոցների գերը, վորոնք նախատեսված են կանոնադրությամբ:

Պետք ե խոսել նաև հին, վերացված տույժերի մասին: Դրա մասին նույնպես քիչ չխոսեցին համագումարին նախորդող կուսակցական ժողովներում: Յեթև մարդն ուղղվել ե և նրա տույժը վերացված ե, — կարիք չկա դրա մասին ժշտապես հիշեցնելու, կարիք չկա վրեժ լուծելու հին, ուղղված սխալների համար և բարոյապես ճշգրիտ կուսակցության անդամներին:

Մենք քիչ թվով փաստեր չունենք, յերբ մարդը մի 10 տարի սրանից առաջ զանցանք և գործել և դրա համար

տույժ ե ստացել: Հետո մարդն ուղղվել ե, տույժը նրա վրայից հանվել ե: Սակայն այդ տույժը պարտադրաբար հիշեցնում են, յերբ վոր խոսք և բացվում այդ մարդու մասին: Դա չառ վեաս ե հասցնում, որինակ, կուսորդաներն ընտրվելու իրավունքի իրականացման տեսակետից: Հայտնի յե, վոր կուսակցական որդանների ընտրությունների ժամանակ թեկնածությունները քննարկելիս այդպիսի ընկերություններից: Իսկ դա ճիշտ չե: յեթև մարդն ուղղվել ե իր զանցանքը, ինչո՞ւ պետք ե առմբողջ կյանքի ընթացքում բարոյական բիծ կրի: Հնի համար վրեժ լուծել հարկավոր չե: (Զայներ—նիշտ ե):

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՅՈՒՐԱՑՄԱՆ ՅԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Թեղիսներում անհրաժեշտություն ե առաջադրված՝ վերացնել կուսակցության մեջ ընդունվող թեկնածուներին ներկայացլող կանոնադրական այն պահանջը, վորի համաձայն, վորպես նրանց ընդունելության պայման, դրվում ե, բացի կուսակցության ծրագիրը և կանոնադրությունն ընդունելուց ու կանոնադրական թեկնածուական ստաժն անցնելուց, նաև ծրագրի յուրացում:

Ընկեր Ստալինը Համե(թ)կ կենտրոնի 1937 թվականի փետրվար-մարտյան պլենումում տված իր զեկուցման մեջ մատնանշում եր.

«Կուսակցության ծրագիրը յուրացնելու համար պետք ե իսկական մարքսիստ լինել, ստուգված ու տեսականորեն պատրաստված մարքսիստ: Յես չգիտեմ, մեղ մոռ շատ կդանվեն կուսակցության այնպիսի անդամներ, վորոնք արդեն յուրացը են մեր ծրագիրը, գարձել են իսկական մարքսիստներ՝ տեսականորեն պատրաստված և ստուգված: Յեթև առաջնալու լինենք այդ ուղիով, ապա մենք ստիպված կլինենք կուսակցության մեջ թողնել միայն ինտելիգենտներին և առհասարակ զիտնական մարդկանց: Ում ե պետք այդպիսի կուսակցությունը: Մենք ունենք կուսակցության անդամության մասին ստուլ-

ված և բոլոր փորձություններին դիմացած լենինյան Փորձուլա : Այդ Փորձուլայի համաձայն՝ կուսակցության անդամ համարվում է նա, ով ընդունում է կուսակցության ծրագրը, մուծում և անդամավճար և աշխատում է նրա կազմակերպություններից մեկում : Ուշադրություն դարձրեք, լենինյան Փորձուլայի մեջ խոսվում է վոչ թե ծրագրի յուրացման մասին, այլ ծրագրին ընդունելու մասին : Մրանք յերկու միանդամայն տարբեր բաներ են : Ապացուցելու կարիք անդամ չկա, վոր այստեղ իրավացի յե լենինը, և վոչ թե մեր այն կուսակցական ընկերները, վորոնք դատարկ տեղը շաղակրատում են ծրագրի յուրացման մասին : Յեվ այդ հասկանալի յե : Յեթե կուսակցությունը յեներ այն բանից, վոր կուսակցության անդամ կարող են լինել միայն այնպիսի ընկերներ, վորոնք արդեն յուրացըել են ծրագրը և դարձել են տեսականորեն պատրաստված մարքսիստներ, ապա նա կուսակցության մեջ չեր ստեղծի հազարավոր կուսակցական խմբակներ, հարյուրավոր կուսակցական դմբրոցներ, վորտեղ կուսակցության անդամներին մարքսիզմ են սովորեցնում և նրանց ողոնում են յուրացնելու մեր ծրագրը : Միանդամայն պարզ ե, վոր յեթե կուսակցությունն այդպիսի դրագրոցներ ու խմբակներ ե կազմակերպում կուսակցության անդամների մեջ, ապա դա այն պատճառով ե, վոր նա դիտե, վոր կուսակցության անդամները դեռ չեն կարողացել յուրացնել կուսակցական ծրագրը, դեռ չեն կարողացել տեսականորեն պատրաստված մարքսիստներ դառնալ :

Յուրացնել ծրագրը—այդ նշանակում է կարողանալ Հիմնավորել այն : Ընդունել ծրագիրը—այդ նշանակում է համակարծիք լինել նրա դրույթներին, համաձայն լինել նրա հետ և պատրաստ լինել պաշտպանելու այն : Պարզ ե, վոր թեկնածուից պահանջել ծրագրի յուրացում, այսինքն հիմնավորում—այդ նշանակում է մարդկանց փախցնել կուսակցությունից : Այդ պահանջները թեորիակես սիսալ են և

պրակտիկայում տանում եյին դեպի անձիշտ մոտեցում ընդունվողների նկատմամբ : Շատ թեկնածուներ յերկուող եյին կրում կուսակցության անդամ փոխադրվելու մասին դիմում տալուց, վախենալով թե կենթարկվեն քաղաքական քննության, վորը, լողեպ, անց եր կացվում հաճախ տգետ մարդկանց կողմից : Պրակտիկայում այդ չհիմնավորված պահանջները տանում եյին դեպի կուսակցության հիմնական սկզբունքների խախառում և ստեղծում եյին անորոշություն ու անկայունություն կուսակցության շատ անդամների գրության մեջ :

Իհարկե, ընկերներ, այդ չի նշանակում, վոր թեկնածուներ արգելվում է յուրացնել ծրագիրն այն ժամանակաշրջանում, յերբ նա անցնում է թեկնածուական ստաժը : Բայց խոսքը վերաբերում է թեկնածուներին ներկայացվող կանոնադրական պահանջին : Պարզ ե, վոր թեկնածուից պահանջել ծրագրի յուրացում, այդ նշանակում է մարդկանց փախցնել կուսակցությունից :

Կուսակցության ծրագրի և կանոնադրության ընդունում, անդամավճարների մուծում, աշխատանք կուսակցական կազմակերպություններից մեկում—ահա՛ թե ըստ կանոնադրության ինչ և պահանջվում կուսակցության անդամից : Կուսակցության անդամության մասին լենինյան ստավին վորդված փորմուլան չի պահանջում վորեւ բարելավում : Ահա՛ թե ինչու անհրաժեշտ և վերացնել ծրագրի յուրացման վերաբերյալ այն պահանջը, վոր կա կուսակցության ներկայումս գործող կանոնադրության մեջ :

ՆԵՐԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ՄԱՍԻՆ

Ծնկերներ : Յերկրի քաղաքական կյանքում տեղի ունեցած՝ ԿՍՀՄ նոր Սահմանադրության ընդունմամբ պայմանակորմած շրջադարձի կապակցությամբ կուսակցության առաջ ծագեցին նոր խմբիներ : Յերկրի քաղաքական կյանքում տեղի ունեցած շրջադարձը կայանում եր ընտրական սիստեմի լիակատար գեմոկրատացում անցկացնելու, սահմանակակիչ ընտրություններից ընդհանուր ընտրությունների, վոչ մովին հավասար ընտրություններից հավասար

ընտրությունների անցնելու, բազմաստիճան ընտրություններից ուղղակի ընտրությունների անցնելու, բաց ընտրություններից փակ ընտրությունների անցնելու մեջ:

Նոր ընտրական սիստեմը պետք է համուշներ և իրոք հանդեցեց մասամբների քաղաքական ակտիվությունն ուժեղացնելուն, խորհրդային իշխանության որդանների նկատմամբ մասսաների վերահսկողությունն ուժեղացնելուն, ժողովրդի առաջ խորհրդային իշխանության որդանների պատսխանատվությունն ուժեղացնելուն:

Յերկրի քաղաքական կյանքում տեղի ունեցած ըրջադարձը կազմ ու պատրաստ դիմավորելու համար կուսակցությունը պետք է գլուխ կանգներ այդ ըրջադարձին և լիովին ապահովեր իր զեկավար դերը ԽԱՀՄ Գերազույն Խորհրդի և Միութենական հանրապետությունների Գերազույն Խորհրդների առաջիկա ընտրություններում: Բայց դրա համար անհրաժեշտ եր, վորպեսզի կուսակցական կազմակերպություններն իրենք իրենց պրակտիկ աշխատանքում դառնային մինչեւ վերջը զեմովերատական, վորպեսզի նրանք իրենց ներկուսակցական կյանքում լիովին անցկացնելին դեմոկրատական հենարավելիքի հիմունքները, ինչպես այդ պահանջում ե կուսակցության կանոնադրությունը, վորպեսզի կուսակցության բոլոր որդանները լինելին ընտրովի, վորպեսզի քննադատությունը և ինքնաքննադատությունը կուսակցության մեջ զարգացվելին լիակատար չափով, վորպեսզի կուսակցական մասսայի առաջ կուսակցական կազմակերպությունների պատասխանատվությունը լիներ լիակատար և վորպեսզի ինքը՝ կուսակցական մասսան՝ լիներ լիովին ակտիվացված:

Կենտրոնի փետրվար-մարտյան պլենումում պարզվեց, վորմի ամբողջ շարք կուսակցական կազմակերպություններ իրենց պրակտիկ աշխատանքում աջ ու ձախ խախտում են կուսակցության կանոնադրությունը և դեմոկրատական ցենտրալիզմի հիմունքները, ընտրականությունը նենդափոխելով կոռուպտացիայով, ըստ առանձին թեկնածությունների քվեարկության անցնելը, կուսակցության բոլոր անդամների համար թեկնածուներին բացարկելու և վերջիններիս քննադատելու անուհաւանականի իրավունքի ապահովումը, կուսակցական որդանների ընտրությունների ժամանակ արգելեց ցուցակով քվեարկությունը, ըստ առանձին թեկնածությունների քվեարկության անցնելը, կուսակցության բոլոր անդամների համար թեկնածուներին բացարկելու և վերջիններիս քննադատելու անուհաւանականի իրավունքի ապահովումը, կուսակցական որդանների ընտրությունների ժամանակ թեկնածուների փակագալական ակտիվիտերի, իսկ մեծ քաղաքներում՝ նաև ուսուական ակտիվիտերի պարբերական հրավիրման պարտադրականության սահմանումը:

արկան և կուսակցական աշխատանքը վերակառուցել լայնորեն ծավալված ներկուսակցական զեմոկրատիայի հիման վրա:

Վո՞րն ե բոլշևիկյան ներկուսակցական դեմոկրատիայի եյությունը: Բոլշևիկյան ներկուսակցական դեմոկրատիայի եյությունը, ինչպես այդ մասին բազմիցս սովորեցրել ե ընկեր Ստալինը, հանգում և ինքնադրություննեյության, կուսակցական զեկավարության մեջ կուսակցության անդամների ակտիվ մասնակցության հարցին: «Ներկուսակցական զեմոկրատիան կուսակցական մասսաների ակտիվության բարձրացումն ե և կուսակցության միասնության ամրապնդումը, պրոլետարական գիտակցական դիսցիլինայի ամրապնդումը կուսակցության մեջ» — այսպես և սովորեցնում ընկեր Ստալինը:

Հատկապես այդ նպատակով կուսակցությունը վեկվեգացիայի յենթարկեց կուսակցական աշխատանքի պրակտիկայում գոյություն ունեցած՝ դեմոկրատական ցենտրալիզմի հիմունքների խափառումները և, համապատասխան կուսակցության կանոնադրության, վերականգնեց կուսակցական կազմակերպությունների զեկավար որդանների ընտրականությունը:

Կուսակցությունն անցկացրեց նույնպես հետեւզական զեմոկրատական պրակտիկայի կերպումն ապահովող միշտաքառակությունը՝ միջոցառումներ, այն ե՝ վերացրեց կոռուպտացիայի պրակտիկան, կուսակցական որդանների ընտրությունների ժամանակ արգելեց ցուցակով քվեարկությունը, ըստ առանձին թեկնածությունների քվեարկության անցնելը, կուսակցության բոլոր անդամների համար թեկնածուներին բացարկելու և վերջիններիս քննադատելու անուհաւանականի իրավունքի ապահովումը, կուսակցական որդանների ընտրությունների ժամանակությունների փակ (գաղտնի) քվեարկության սահմանումը, քաղաքային կուսակցական ակտիվիտերի, իսկ մեծ քաղաքներում՝ նաև ուսուական ակտիվիտերի պարբերական հրավիրման պարտադրականության սահմանումը:

Կանոնադրությունը պետք է արտացոլի կուսակցության այդ նոր միջոցառումները, վորոնք ստուգված են պրակտի-

կայով, ապահովել են քննադատության և ինքնաշնաղատության հետագա զարգացումը, կուսակցական մասսայի առաջ կուսակցական որդանների ունեցած պատասխանատվության բարձրացումը, կուսակցական մասսայի ակտիվության աճումը և զրանով իսկ նպաստել են կուսակցության սպառազինմանը՝ քաղաքական դեկալարման նոր խնդիրները հաջողությամբ լուծելու համար:

Հայտնի յէ, վոր ԽՍՀ Միության և Միութենական Հանրապետությունների Դերադույն Խորհուրդների ընտրությունների ցույց տվին, վոր կուսակցությունը կոմունիստների և անկուսակցականների ըլոկի վակատար հաղթանակին հասավ հատկապես կուսակցական աշխատանքի պրակտիկան ներկուսակցական դեմոկրատիզմի սկզբունքների կենսադրժման հիման վրա վերակառուցելու հետևանքով:

Դեմոկրատական պրակտիկայի հետևողական կերպումը կյանքում՝ արդյունավետ աղղեցություն դործեց կուսակցական կազմակերպությունների ամբողջ կյանքի վրա։ Կուսակցության անդամների ակտիվության և գիտակցականության աճման, կուսակցության դործի համար նրանց պատասխանատվության աճման հանրադրումարը հանդիսանում են նախահամագումարյան դիսկուսիան և կուսակցական որդանների ընտրությունների արդյունքները, վորոնք ցուցաբերեցին կուսակցական դեմոկրատիզմի ծաղկումը։ (Ծափահարություններ)։ Այդ հիման վրա կուսակցության կյանքին մասնակցելու բարձրացան կուսակցության անդամների հսկայական նոր շերտեր։

1938 թվականին կուսակցական որդանների ընտրությունների ժամանակ լայնորեն ծավալվեց թույլ աշխատած կուսակցական որդանների գործունեյության քննադատությունը։ Այդ քննադատության հետևանքով անբավարար ձևաչփեց մեծ թվով սկզբնական կուսակցմակերպությունների կուսակցական կոմիտեների և կուսակցմակերպիչների, կուսակցության ըրջկոմների, քաղկոմների, մարզկոմների և յերկրկոմների աշխատանքը։

1938 թվականի ընտրությունների ժամանակ կուսակցական դեկանակ որդաններում առաջ քաշվեցին բազմաթիվ

նոր աշխատողներ, ըստվորում աշխատողների մեծ մասն առաջին անգամ ընտրվեց կուսակցական դեկանակությունն եւ։ Ընդամենը առաջին անգամ ընտրվեց սկզբնական կուսակցմակերպությունների կուսակցական կոմիտեների անդամների 35%, շրջկոմների կազմի 41%, քաղկոմների կազմի 46%, մարզկոմների, յերկրկոմների և աղքային կոմիտուսակցությունների կենտրոնական կոմիտեների կազմի 60%։

Տեղական կուսակցական կազմակերպությունների հաշվետու նյութերը ցույց են տալիս, վոր կուսակցական ԽՎԻ համագումարի թեղիսների քննարկմանը կուսակցական ժողովներում մասնակցել են ավելի քան 2 միլիոն կուսանդամներ և թեկնածուներ։ Մոտ մեկ միլիոն կոմունիստներ այդ ժողովներում մասնակցել են մտքերի փոխանակությանը։ (Ծափահարություններ)։

Ընկերներ, այնպիսի գիտկուսիա, վորպիսին տեղի ունեցավ ԽՎԻ համագումարից առաջ, մեր կուսակցությունը գենես յերեք չի ունեցել։ Այդ գիտկուսիան անցնում եր մեր կուսակցության աննախընթաց համախմբան և միասնականության իրազրության մեջ, կուսակցության անդամների ակտիվության բացառիկ աճման իրազրության մեջ։

Դիսկուսիային մասնակցած յուրաքանչյուր մարդ մտցնում եր իր ուղղումներն ու առաջարկությունները՝ կուսակցությանն ողնելու տեսակետից, ընդհանուր-կուսակցական գործի ամբազնդման տեսակետից։

Դիսկուսիայի արդյունքները հաստատում են, վոր մենք այժմ աղջում ենք ներկուսակցական դեմոկրատիայի ծաղկում, կուսակցության անդամների ակտիվության և ինքնազործունեյության աննախընթաց վերելք։

Կենտրոնի 1937 թվականի միարարմարացան պլենումի հայտնի վորոշումների և այդ պլենումում ընկեր Ստավրի կողմից կուսակցությանը տված ցուցումների հիման վրա կուսակցության կատարած աշխատանքը տվեց իր բարերար արդյունքները։ Բարձրացավ և ամրապնդվեց կուսակցության և նրա աշխատանքը հետ կուսակցության յուրաքանչյուր անդամի կապի զդացմունքը։ կուսակցության

յուրաքանչյուր անդամ սկսեց իրեն զդալ լիարժեք միավոր, վորը կապված և կուսակցության ընդհանուր կոլեկտիվի հետ և պատասխանատու յէ ընդհանուրի համար, ամբողջի համար: Այդ—ներկուսակցական գեմոկրատիայի զարգացման կարևորագույն և ամենաարժեքավոր արդյունքն է:

Յել յերկրորդը, վորը պակաս կարեոր չե և վորը նույնպես մեր կողմից պետք և նշվի վորպես վերջին տարիների ընթացքում կուսակցության զարգացման հանրագումար,—այդ այն է, վոր նոր հարաբերություններ ամրապնդվեցին զեկավարների և մասսաների միջև. անչափ աճեց մասսաների վատահությունը գեղի զեկավարները և նրանց փոխադարձ կատն ու մոտիկությունը: Մասսան վարժվեց զեկավարներին դիտել վորպես իր պատվիրակներ, իրեն հարազատ ու մերձավոր, վորոնք, զբա հետ միասին, պատասխանատու յին կուսակցության առաջ, մասսայի առաջ, ժողովրդի առաջ: Դա վերջին տարիների ընթացքում կուսակցության կատարած աշխատանքի յերկրորդ ամենաարժեքավոր հանրագումարն է: (Բուռն ծափահարություններ):

Յերրակացություն. կուսակցական-քաղաքական աշխատանքի վերակառուցումը՝ բոլշևիկյան ներկուսակցական գեմոկրատիայի սկզբունքները կյանքում հետեղականորեն կենսագործելու հիման վրա՝ ամրապնդեց մեր կուսակցության գորությունը: Կուսակցությունը գտնվում է կուսակցական մասսայի լիակատար ակտիվացման ճանապարհին, իսկ գու մասսաներում կուսակցության՝ ամբողջությամբ և յուրաքանչյուր կոմունիստի՝ առանձին վերցրած՝ իր ավանդութային գերն՝ իրականացնելու, հետևաբար, նաև սոցիալիստական շինարարության հետագա հաղթանակների կարեորագույն պայմանն է:

Կուսակցությունն այսուհետեւ ել կզարդացնի ու կապահովի ներկուսակցական գեմոկրատիան, վորպես կուսակցության անդամների ակտիվության և ինքնազործունեյության բարձրացման միջոց, վորպես կուսակցությունը թշնամական աղոթեղությունից և թափթփուկներից մաքրելու միջոց: (Յերկարատեւ ծափահարություններ):

ԿԱԴՐԵՐ ԸՆՏՐԵԼՈՒ, ԿԱՏԱՐՈՒՄՆ ՍՏՈՒԳԵԼՈՒ, ԿՈՒՍԱԿ-ՑԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՆՈՐ ԿԱԴՐԵՐ ԱՌԱՋ ՔԱՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Անցնում եմ կուսակցական ապարատը վերակառուցելու, կաղըեր ընտրելու և կատարումն ստուգելու հարցերին:

Ընկեր Ստալինն իր հաշվետու զեկուցման մեջ մեր համագումարում ամեն կաղըերի և նրանց ճիշտ ընտրության նշանակության սպասիչ վորոշումը:

«Կաղըերը ճիշտ ընտրել—այդ նշանակում է՝

Նախ՝ կաղըերը գնահատել վորպես կուսակցության և պետության վոսկե Փոնդը, թանգ գնահատել նրանց, հարգանք տածել զեղի նրանց:

Յերկրորդ՝ ճանաչել կաղըերը, ուշադիր կերպով ուսումնասիրել յուրաքանչյուր կաղըային աշխատողի արժանիքներն ու թերությունները, դիտենալ, թե ինչ պոստում ամենից հեշտ կարող են ծավալվել աշխատողի ընդունակությունները:

Յերրորդ՝ հոգատար կերպով աճեցնել կաղըերը, յուրաքանչյուր աճող աշխատողի ողնել վեր բարձրանալու, ժամանակ չինայել այդպիսի աշխատողների հետ համբերատար կերպով «զբաղվելու» և նրանց աճումը արագացնելու համար:

Չորրորդ՝ ժամանակին և համարձակ կերպով առաջ քաշել նոր, յերիտասարդ կաղըերին, թույլ չտալով, վոր նրանք յերկար մնան Հին տեղում, թույլ չտալով, վոր նրանք թթվեն:

Հինգերորդ՝ աշխատողներին ըստ պոստերի գասավորել այնպես, վորպեսզի յուրաքանչյուր աշխատող իրեն իր աշխատում զբա, վորպեսզի յուրաքանչյուր աշխատող կարողանա մեր ընդհանուր գործին տալ այն առավելագույնը, ինչ նա ընդհանրապես ընդունակ և տալու իր անձնական հատկություններով, վորպեսզի կաղըերի դասավորման աշխատանքի ընդհանուր ուղղությունը լիովին համապատասխանի այն քաղաքական ոգի պահանջներին, վորի կենսագործման համար կատարվում ե այդ դասավորումը»:

Այսուհետեւ ընկեր Ստալինը մատնանշեց, թե ներկայու-

մըս ինչումն ե կայանում կուսակցության ինդիրը կադրերի
ձիւտ ընտրության տեսակետից :

«Խնդիրն այն ե, վորպեսդի վարեց-վեր ամբող-
ջությամբ մի ձեռքում վերցնենք կադրերի ընտրու-
թյան գործը և այն բարձրացնենք պատշաճ, զիտա-
կան, բոլչեկլյան բարձրության :

Դրա համար անհրաժեշտ ե վերջ տալ կադրերի
ուսումնասիրման, առաջքաշման և ընտրության դոր-
ծի մասնատմանը դանաղան բաժիններում և սեկտոր-
ներում, կենտրոնացնելով այդ գործը մի տեղում :

Այդպիսի տեղ պետք ե լինի կադրերի Կուսակար-
չությունը Համեր(բ)կ կենտկոմի կազմում և կադրերի
համապատասխան բաժինը յուրաքանչյուր հանրապե-
տական, յերկրամասային և մարզային կուսակար-
կերպության կազմում» :

Այդ տեսակետից կուսակցական ապարատի դոյություն
ունեցող կազմակերպությունն անբավարար գուրս յեկալ:

Կուսակցության կանոնադրության համաձայն կուսակ-
ցական վճիռների ու վորոշումների իրավործումը և խոր-
հրդային տնտեսական որդանների ու ստորադաս կուսակար-
մակերպությունների կողմից դրանց կատարումն ստուգելու
պրակտիկ աշխատանքի համար մարզկոմներում, յերկրկոմ-
ներում, ազդային կոմիտեակցությունների կենտկոմներում
և Համեր(բ)կ կենտկոմում կազմակերպված եյին արտադրա-
կան-ճյուղային բաժիններ: Նկատի յեր առնվում այն, վոր
արտադրական-ճյուղային բաժիններում կենտրոնացվի
ավյալ ճյուղի ամրությանը աշխատանքը, այսինքն՝ կազմակեր-
պական-կուսակցական աշխատանքը, կադրերի նախապատ-
րաստումն ու բաշխումը, ազիտացիոն-մասսայական աշխա-
տանքը, արտադրական պրոպագանդան, համապատասխան
խորհրդային, տնտեսական որդանների և կուսակցական
կազմակերպությունների կողմից կուսակցական վորոշում-
ների կատարման հսկողությունը:

Գործի դոյություն ունեցող կազմակերպության թերու-
թյունները հանդում եյին այն բանին, վոր կադրերի ընտ-
րությունը, վորը մեր կենտրոնից ստացվող ուղղություն
և պահանջում, —վորովհետեւ կադրերի ընտրության գործը

կապված ե կադրերի ամբողջ փորձը և բոլոր զիտելիքները
մեկ անդում կենտրոնացնելու անհրաժեշտության հետ, —
հենց դրա մեջ ե բոլչեկլյան ղեկավարման արվեստը, —
կադրերի ընտրության դործը մասնատված դուրս յեկավ-
բազմաթիվ արտադրական-ճյուղային բաժինների միջև:
Այդ բանը հասցեց կադրերի սիսլ ողտաղործման, կադրե-
րըն ուսումնասիրելու միասնական մեթոդների բացակա-
յության և, հետևաբար, ճեղքվածքների՝ մարդկանց ընտ-
րության դուռը: Կադրերի ընտրության մասնատումն արտա-
դրական-ճյուղային տարբեր բաժինների միջև՝ հասցեց
նույնպես կադրերն ըստ առանձին դարակների և գերատես-
չությունների արհեստականորեն սահմանադատելուն, այն-
ինչ, կադրերի ճիշտ ընտրությունը պահանջում է հմտորեն
և ճկուն կերպով մանեկլը:

Զեղանից շատերը, ընկերներ, իրենց պրակտիկայից
գիտեն, թե ինչպես մեղանում մասնատված ու մանրացված
ե կադրերի ընտրության գործը: Մարդկոմներում և յերկըր-
կոմներում գոյություն ունեն արդյունաբերական բաժին-
ներ, խորհրդային-առևտորային բաժիններ, կուլտուր-լու-
սավորական և այլ բաժիններ: Այդ բաժինների միջև դատ
ու կոիվ ե տեղի ունենում այս կամ այն աշխատողի հա-
մար: Դա բացասաբար և անդրադառնում կադրերի ուսում-
նասիրման, ընտրության և առաջքաշման գործի վրա:

Աշխատողներին աշխատանքի պահանջմունքներին և մարդ-
կանց ունակություններին համապատասխան նպատակահար-
մար կերպով ողտագործելը հարավոր չե կադրերի ընտրու-
թյան գործի Փունկցիոնալ բաժանման շրջանակներում:

“Փորձը ցույց ե տալիս, վոր կուսակցական ապարատի
այդպիսի կազմակերպությունը մեղ չի կարող բալվարել:

Այդ կապակցությամբ ել ծաղեց կենտկոմում կադրերի
հզոր ապարատը՝ կադրերի կառավարչություն ստեղծելու
անհրաժեշտությունը, վորն ընդունակ ե ճիշտ, զիտակա-
նորեն, ինչպես ասում ե ընկեր Ստալինը, լուծելու կադրերի
ընտրության և բաշխման խնդիրները, կուսակցական-կազ-
մակերպական ղեկավարման հարցերն առանձին բաժնում:

Կենտրոնական Կոմիտեն վերջին յերկու տարվա ընթաց-

քում արդեն մի շարք միջոցներ և ձեռնարկել այդ ուղղությամբ, վորոնք կայանում եին այն բանում, վոր զեկավար կադրերի ընտրության և առաջքաշման դործը վոչ միայն կուսորդանների գծով, այլև խորհրդային-անտեսական ապարատի գծով, բոլոր ժողկոմատների գծով, ավելի ու ավելի յեր կենտրոնացվում կենտրոնացմի ներկայիս կուսդեկավար որդանների բաժնում:

Կադրերի ընտրության, ուսումնասիրման և բաշխման գործի այդ վերակառուցումն անհրաժեշտ է կատարել այն ցուցումների վորով, վոր ընկեր Ստալինն և տվել կուսակցության ԽՄՊ համագումարում՝ Համկ(բ)կ կենտրոնի աշխատանքի մասին հաշվետու ղեկուցման մեջ:

Այսուհետեւ, յես կուղեյի կանգ առնել կանոնադրության ելի մեկ փոփոխության վրա, վորը կենտրոնական կոմիտեն ներկայացնում և ԽՄՊ կուսակցական համագումարի քննարկմանը: Ես նկատի ունեմ կուսակցական ղեկավար աշխատանքի՝ իբրև մարզկոմների, քաղկոմների, ըլրջակոմների և այլն քարտուղարներ առաջ քաշվող ընկերներից պահանջվող կուսակցական ստաժն իջեցնելու առաջարկությունը: Կենտրոն առաջարկում է կուսակցության կանոնադրության այդ կետը փոփոխել այն հաշվով, վորունդի իջեցվի պահանջվող կուսակցական ստաժը, ընդունի յելներով կուսակցական աշխատողների նոր կադրեր կուսակցական ղեկավար աշխատանքի առաջ քաշելու համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու անհրաժեշտությունից:

Այս առաջարկությունն սկզբունքային և դործնական մեծ նշանակություն ունի:

Ընկեր Ստալինը մեր համագումարում տված իր ղեկուցման մեջ հանճարեղ պարզորոշությամբ ձեւակերպեց նոր կադրեր առաջ քաշելու խնդիրը:

«Խնդիրը, —ինչպես ասում եր ընկեր Ստալինը, — այն չե, վորպեսզի կողմնորոշվենք կամ չին, կամ թե նոր կադրերով, այլ այն, վորպեսզի հին և յերիտասարդ կադրերին կուսակցության և պետության ղետարդ կադրերին մի ընդհանուր նվազախմբում կավար աշխատանքի մի ընդհանուր ընթացք բանենք»:

Ահա թե ինչու անհրաժեշտ է ժամանակին և համար-

ձակ կերպով յերիտասարդ կադրեր առաջ քաշել ղեկավար ալուստերի:

Յերիտասարդ կադրերը հատկապես ժամանակին և համարձակ կերպով ղեկավար պոստերում առաջ քաշելով մեր կուսակցությունը կարողացալ հասնել ամենալուրջ նվաճումներից մեկին—պետական և կուսակցական ղեկավար աշխատանքի առաջ քաշել կուսակցական և կուսակցությանը հարող ավելի քան կես միլիոն յերիտասարդ բոլենիների:

Անհրաժեշտ և մատնանշել մեր ղեկավար կադրերի վորակական կազմի բարեկալումը: Կուսակցական կադրերի կաղմում այժմ յերեացել են վոչ քիչ թվով բարձրագույն կրթություն ունեցող մարդիկ, կուլտուրական, գիտակ, կրթված մարդիկ:

ՄԵՐ ՔԱՆՈ ՏՎՅԱԼՆԵՐ ԿՈՒՄԱԿՑԱՆ ՂԵԿԱՎՈՐ ԿԱԴՐԵՐԻ ՄԲՈՒ

ՂԵԿԱՎՈՒՄՆԵՐ	Ո.Ն.Է. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ, թիվ մակարդակագույն և միջնակարգ	Մ.Ի.Հ. Առաջարկագույն անց- կամությանը բանկը ընդունելու	Մ.Ի.Հ. 40 առարկան հա- սակի անձեռը	31-ից մինչև 35 տարեկան հասակի անձեռը	1924 թվականից և ավելի	
Մարդկության կադրերի, յերկրության կազմակությունների և ազգային կոմիտեների կուսակցությունների կենտրոնական կոմիտեների քարտուղարների կազմը	333	196 58,9	175 52,6	303 91	177 53,2	268 80,5
Կուսակցության շրջակագույն անձեռների և ոկրությունների կադրերի կազմը	10.902	3.115 28,6	5.248 45,1	10.020 92	5.649 52,7	10.193 93,5
Մարդկության կադրերի, յերկրության կազմակությունների, ազգային կոմիտեների կուսակցությունների կերպությունների գարեգինների կադրերի կազմը	510	327 64,1	231 45,3	469 92	263 51,6	431 84,5

Շամերագրաբարյան: 1. Հայտարարը ցույց է տալիս տոկոսները:

2. Բարձրագույն կրթություն ստացածների գիտակում մասսան ընկնում և 1934—36 թթ. և 1937—38 թթ. կանոնական բառեկամ ավարտածներին:

Յեթև սրանից միքանի տարի առաջ խուսափում ելին կրթված մարդկանց և յերիտասարդությանը կուսակցական գեկավար աշխատանքի առաջ քաշելուց, իսկ վնասարարներն ուղղակի խեղում ելին յերիտասարդ կադրերին, թույլ չտալով, վոր նրանք վեր բարձրանան, ապա կուսակցության ամենախոչոր հաղթանակն այն ե, վոր կուսակցությանը հաջողվեց, աղատիկով վնասարարներից, ճանապարհը հարթել վերջին ժամանակաշրջանում աճած կադրերին առաջ քաշելու համար և նրանց զնել դեկավար աշխատանքի: Դրա մեջ ե մեր կուսակցության ուժի և անպարտելիության գրավականը: (Բուռն ծափակարություններ):

Անբավարար գուրս յեկալ նույնպես կուսակցական դիրեկտիվների կատարումն ստուդելու պրակտիկան, վորը ժամանատված և զանազան արտադրական-ճյուղային բաժինների միջև: Այդ աշխատանքն անհրաժեշտ է նույնպես կենտրոնացնել մեկ տեղում, դրան համապատասխան վորին կուս ՎՀ-ի գործունեյության բնույթը: Կուսակցական վերահսկողությունը պետք է լինի գործունակ, պետք է ժամանակին կանխի սխալները:

Ճիշտ վերահսկողությունը յենթադրում է վոչ միայն դիրեկտիվների կատարման ստուդում, այլև այս կամ այն դիրեկտիվների ճշտության ստուդումը, դրանք ուրիշ դիրեկտիվներով փոխարինելու անհրաժեշտությունը:

Ընկեր Ստալինը բաղմից համառ կերպով մեղ բացատրել և բացատրում է, վոր՝

«Ղեկալարել—այդ դեռ չի նշանակում բանաձեռ վեր դրել և դիրեկտիվներ ուղարկել: Ղեկալարել—այդ նշանակում է ստուդել դիրեկտիվների կատարումը, և վոչ միայն դիրեկտիվների կատարումը, այլև բուն դիրեկտիվները, նրանց ճշտությունը կամ նրանց սխալ լինելը: Ծիծաղելի կլիներ կարծել, թե մեր բոլոր դիրեկտիվները ամբողջ հարյուր տոկոսով ճիշտ են: Այդ չի լինում և չի կարող լինել, ընկեր ճիշտ են: Կատարման ստուգումը հենց նրա մեջ և կայանում, վորպեսզի մեր աշխատողները պյուսիկ փոր-

մի բովում ստուգեն վոչ միայն մեր դիրեկտիվների կատարումը, այլև բուն դիրեկտիվների նշանակությունը: (Ընդդժումն իմն ե —Ա. Ժ.Դ.): Դրա համար ել այդ ասպարեզի ճեղքվածքները նշանակում են ճեղքվածքներ՝ մեր ամբողջ զեկավարության մեջ: (Ստալին, «Կենտկոմի և ԿՎՀ-ի ապրիլյան Միացյալ պլենումի աշխատանքների մասին», 1928թ.):

Կատարման ստուգումը կարևորագույն միջոց է աշխատանքի լացման զեմ, բորբոսի գեմ: Դա կարևորագույն միջոց և վնասարարությունը կանխելու համար: Այստեղ, վորտեղ ճիշտ և կազմակերպված կատարման ստուգումը—վնասարարը կաթվածահար և արլած:

Կուսակցական դիրեկտիվների կատարման վերահսկողությունն ուժեղացնելու խնդիրը գառնում է Կուսակցական վերահսկողության Հանձնաժողովի կենտրոնական խնդիրը:

Յեկալով դրանից, անհրաժեշտ է սահմանել, վոր կուս ՎՀ-ն աշխատում է Համկ(բ)կ կենտկոմին կից: Այդ կազմակցությամբ վերահսկում է Կուս ՎՀ-ն անմիջականութեն կուսակցության համագումարում ընտրելու անհրաժեշտությունը: Կուս ՎՀ-ն պետք է ընտրվի կենտրոնական կոմիտեյի պլենումի կողմից և աշխատի Համկ(բ)կ կենտկոմի դեկավարությամբ ու դիրեկտիվներով:

ԿԱՐԵՐԻ ԹԵՐՈՒԱԿԱՆ ՅԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԵՏԱՄՆԱՑՈՒԹՅԱՆ ԼԻՎԼԻԴԱՅԻ ՄԱՍԻՆ

Ընկեր Ստալինն իր զեկուցման մեջ ամենայն սրությամբ և պարզությամբ դրեց կուսակցական պրոպագանդայի բնագավառի, կադրերի մարքսիստական-լենինյան գաստիբարակության բնագավառի խնդիրները:

Նոր սասաց.

Հկարելի յե բավարար կերպով դնել կուսակցության կազմի կարգավորման և ղեկավար որգաններն ստորին աշխատանքին մոտեցնելու գործը. կարելի յե բավարար կերպով դնել կազմերի առաջքաշման, նրանց ընտրության, նրանց դասավորման գործը. բայց յեթե, այդ ամենով հանդերձ, ինչ-ինչ պատ-

կտոներով սկսում ե կաղալ մեր կուսակցական պրո-
պագանդան, յեթե սկսում ե տկարանալ մեր կաղըն-
քի մարզսիստական-լենինյան դաստիարակության դոր-
ծը, յեթե թուլանում ե այդ կադրերի քաղաքական և
թեորիական մակարդակի բարձրացման մեր աշխատան-
քը, իսկ իրենք կադրերը, այդ կապակցությամբ, դա-
դարում են մեր առաջընթացի հեռանկարով հետա-
քը քըրքըլելուց, դադարում են մեր գործի արդարությու-
նը հասկանալուց և վերածվում են հեռանկար չունե-
ցող գործամոլների, վորոնք կուրորեն և մեխանիկորեն
կատարում են վերևից արված ցուցումները, — ապա
պետք ե անպայման տկարանա մեր ամբողջ պետական
և կուսակցական աշխատանքը: Հարկավոր ե վորպես
աքսիոմա ընդունել, վոր վորքան ավելի բարձր ե պե-
տական և կուսակցական աշխատանքի ուղածդ ճյուղի
աշխատողների քաղաքական մակարդակը և մարզսի-
տական-լենինյան դիտակցականությունը, այնքան
ավելի բարձր և ավելի արդյունավետ ե բուն աշխա-
տանքը, այնքան ավելի ե ֆիելտրի լինեն աշխատանքի
արդյունքները, և, ընդհակառակը, վորքան ավելի
ցած և աշխատողների քաղաքական մակարդակը և
մարզսիտական-լենինյան դիտակցականությունը,
այնքան ավելի հավանական են աշխատանքի ձախո-
ղումները և տապալումները, այնքան ավելի հավա-
նական և աշխատողների իրենց մանրացումն ու վերա-
սերումը գործամոլմանրախնդիրների, այնքան ավե-
լի հավանական ե նրանց այլասերումը»:

Ընկեր Ստալինը նշեց, վոր մենք ունենք բոլոր անհրա-
ժեշտ միջոցներն ու հնարավորությունները, վորպեսզի
իդեոլոգիապես պատրաստենք մեր կադրերը ու քաղաքա-
կանապես կոփենք նրանց, և վոր ինն տասերորդով դրա-
նից ե կախված մեր բոլոր պրակտիկ խնդիրների լուծումը:
Կուսակցական կադրերի թեորիական և քաղաքական
հետամնացության լիկվիդացիայի խնդիրը, կուսակցության
անդամներին մարզսիտական-լենինյան թեորիայով զինելու
և բոլցելովի տիրապետման ինդիրը պահանջում ե պատշաճ
մակարդակի բարձրացնել կուսակցական պրոպագանդայի և

աղիտացիայի դործը՝ համապատասխան կենտկոմի «կու-
սակցական պրոպագանդայի դրվածքի մասին «Համկ(բ)կ
պատմության համառոտ դասընթացի» լույսընծայման կա-
պակցությամբ» վորոշման, ինչպես նաև համապատասխան
այն ցուցումների, վոր մեր համագումարում այդ հարցի
առթիվ իր գեկուցման մեջ տվեց ընկեր Ստալինը:

Բոլցելովի տիրապետման խնդիրն ուղղակի բղիսում և
սոցիալիստական շինարարության ժամանակակից ետապի
խնդիրներից:

Յերրորդ հնդամյակի հիմնական խնդիրը, աշխատակո-
րության կոմունիստական դաստիարակության խնդիրը,
մարդկանց դիտակցության մեջ կամիտալիդմի մնացուկ-
ները հաղթահարելու խնդիրը հաջողությամբ իրականաց-
նելու համար, սոցիալիստական շինարարության դորձնա-
կան հարցերը հաջողությամբ լուծելու համար, կապիտո-
լիստական ըրջապատման և նրա աղենուուրայի դեմ մղլող
պայքարում կազմ ու սպատրաստ լինելու համար մեր կաղ-
երը պետք ե դինված լինեն թեորիայով, այսինքն՝ հասա-
րակական զարդացման և քաղաքական պայքարի որենքնե-
րի գիտությամբ:

Կուսակցական պրոպագանդայի արմատական թերու-
թյունները շարադրված են կենտկոմի հայանի վորոշման
մեջ: Այդ վորոշման մեջ մատնացույց են արված նաև կու-
սակցական պրոպագանդան «Համկ(բ)կ պատմության հա-
մառոտ դասընթացի» լույսընծայման կապակցությամբ վե-
րակառուցելու յեղանակները:

Այժմ սկսված ե պրոպագանդիտական աշխատանքի
վերակառուցումը: Այդ վերակառուցման առաջին քայլերը
ցույց են տալիս, վոր «Համկ(բ)կ պատմության համառոտ
դասընթացի» լույսընծայումը և կենտկոմի վորոշումը հղոր
խթան են տվել գաղափարական քաղաքական ամբողջ աշ-
խատանքը նոր աստիճանի բարձրացնելու համար: Միլիո-
նավոր մարդիկ ձեռնամուխ են յեղել մարզսիդմ-լենինիզմի
ուսումնասիրմանը, «Համկ(բ)կ պատմության համառոտ
դասընթացի» ուսումնասիրմանը: Դա մեր կուսակցության
խոշորագույն հաղթանակն է: «Համկ(բ)կ պատմության

Համառոտ դասընթացը» ռուսերեն լեզվով տարածվեց մոտ 12 միլիոն որինակ տիրաժով (աղմբակի ծափահարություններ) և ԽՍՀՄ մյուս ժողովուրդների լեզուներով՝ մոտ 2 միլիոն որինակ։ «Համկ(բ)կ պատմության համառոտ դասընթացը» թարգմանված է ոտար 28 լեզվով և արդեն հրատարակվում է ավելի քան 673 հազար որինակ տիրաժով։ Հարկավոր է ուղղակի ասել, վոր մարքսիզմի գոյության ընթացքում դա առաջին մարքսիստական գիրքն է, վորն այնքան լայն տարածում է գտել։ (Ծափահարություններ)։

Կուսակցական կադրերը ձեռնամուխ են յեղել ինքնուրույն ուսուցման։ Մարքսիստական-լենինյան գրականության պահանջը վիթխարի չափով աճել է։ Մարքսիզմ-լենինիզմի պրոպագանդային այժմ սկսոված և բոլոր կուսակցական կազմակերպությունների ուշադրությունը։

Արդեն կուսակիւր է աշխատանքի նոր ձևերի վորոշ փորձ։

Կենտկոմի վորոշումից հետո մարքսիզմ-լենինիզմի բանավոր և տպադիր պրոպագանդային ներդրավված են կուսակցության թեորիական և պրոպագանդիստական լավագույն ուժերը։ Ստեղծվում է փորձված պրոֆեսիոնալ պրոպագանդիստների կազր։

Մինչև կուսակցական պրոպագանդայի վերակառուցումը մեղ մոտ կուսակցության մեջ ավելի քան 112 հազար պրոպագանդիստ կար։ Ինքնին հասկանալի յե, վոր նրանց մեջ կային բավական թվով թույլ պատրաստված մարդիկ։ Այժմ այդ քանակին զգալիորեն կրծատվել է։ Կուսակցական կազմակերպությունները պրոպագանդիստ ընտրում են պրոպագանդայի համար իրոք պատրաստված մարդկանց։

Կրծատվել են նաև խմբակների քանակը։ Յեթե, որինակ, Մոսկվայում մինչև կենտկոմի վորոշումն ավելի քան 9 հազար խմբակ եր հաշվվում, իսկ Լենինգրադում՝ ավելի քան 5 հազար խմբակ, ապա այժմ Մոսկվայում 500-ից միքիչ ավելի խմբակ կա, իսկ Լենինգրադում՝ մոտ 300։

Կադրերի աշխատանքի հիմնական մեթոդ զառնում է դրքի վրա կատարվող ինքնուրույն աշխատանքը։

Բնդարձակվում ե տպադիր պրոպագանդան, վորը վըճ-ող նշանակություն ունի պրոպագանդիստական աշխատանքի դրվագներ։

Այս ամենը, ակայն, միայն ոկնդրն ե պրոպագանդիստական աշխատանքի այն ծավալման, վորին ձգտում ե մեր կուսակցությունը։ Այդ վերելքի մեջ վճռող դեր պիտի խաղա մեր բոլշևիկյան մամուլը։ Տպադիր խոսքի պահանջը վեթխարի չափով աճել է և պիտի աճի։

Մենք դանվում ենք կուսակցության ամբողջ պրոպագանդիստական աշխատանքի վիթխարի վերելքի նախորյակին։ Պրոպագանդայի նովատակների համար պետք է լայնութեն ոգտագործվեն այնպիսի հզոր միջոցներ, ինչպիսիք են կիսոն, ուղիոն, արվեստը։

Կուսակցության և պետության մեջ մարքսիստական-լենինյան պրոպագանդայի գործը հաջողությամբ ղեկավարելու համար, կուսակցական կադրերի թեորիական և քաղաքական հետամնացությունը լիկվիդացիայի յենթարկելու խնդիրները հաջողությամբ լուծելու համար կենտկոմը պետք է ունենա պրոպագանդայի և ազիտացիայի հզոր ապարատ հանձին Պրոպագանդայի և աղիտացիայի կառավարչության, վորը կենտրոնացնելու յետպադիր ու բանավոր պրոպագանդայի ու աղիտացիայի ամբողջ աշխատանքը։

Գաղափարական կոփումը խորհրդային մարդկանց մեջ կրօստիերակի խորհրդային քաղաքացու արժանապատվության դիտակցություն և վստահություն իր ուժերին։ Ինչպես յերեք, այժմ բացառիկ ուժով հնչում են ընկեր Ստալինի այն խոսքերը, վոր թեորիան պրակտիկներին տալիս է կողմնորոշման ուժ, ինքնավստահություն, հեռանկար, իրադարձությունները վոչ միայն տեսնելու, այլև կանխատեսելու հմտություն։

Մեր կուսակցական պրոպագանդայի վերակառուցումը կապահովի թեորիական աշխատանքի ծաղկումը և մեր կուսակցությունը կդարձնի դադարիարապես ել ավելի դինված։ (Բուռն ծափահարություններ)։

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԱՊԱՐԱՏԸ ՎԵՐԱԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՅԵՎ
ՀԱՄԱՍԻՌԵՆԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Բնկերներ, Համկ(բ)կ կանոնադրության մեջ փոփո-
խություններ կատարելու վերաբերյալ թեղիսներն առաջա-
դրում են ինչպես կենտկոմում, այնպես ել տեղերում բա-
ժինների ապարատի վերակառուցման խնդիրը:

Արտադրական-ճյուղային բաժիններն այժմ չդիտեն, թե
իրենք, իսկն ասած, ինչով պետք է զբաղվեն, թույլ են
տալիս իրենց փոխարիննել տնտեսական որգաններին, մրցում
են նրանց հետ, իսկ դա դիմագրեկություն և անպատճա-
նատվություն և առաջ բերում աշխատանքում:

Համկ(բ)կ կենտկոմի արտադրական-ճյուղային բաժին-
ները պետք է վերացվեն, բացառությամբ զյուղատնտեսա-
կան բաժնի, նկատի ունենալով գյուղատնտեսության բնա-
գավառում խորհրդային և կուսակցական կազմակերպու-
թյունների գործունեյությանը վերահսկելու և հետեւյու-
խնդրի առանձնահատուկ կարերությունը:

Այժմ մեր կուսակցության առաջ ամբողջ հասակով
կանգնել են կոլտնտեսությունների կազմակերպական ամրա-
պընդամն խնդիրները, կոլտնտեսային եկոնոմիկայի, կոլ-
տնտեսություններում, խորհտնտեսություններում և ՄՏ
կայաններում աշխատանքի կազմակերպումը զեկավարելու
հարցերը: Այդ խնդիրների մասին համագումարում վառ ու
համոզիչ կերպով խոսեց ընկ. Անդրեյեվը:

Հողժողկոմատի և Խորհուտեսությունների ժողկոմատի
աշխատանքի վարոչ թուլության առկայությամբ և այն պայ-
մաններում, յերբ գյուղատնտեսության բնագավառում աշ-
խատանքը բացառիկ ուշադրություն և հոգատարություն
և պահանջում տեղական կուսակցական կազմակերպություն-
ների կողմից, —կենտրոնական կոմիտեյի, յերկրկոմների և
մարդկոմների ապարատի կազմում Գյուղատնտեսական
բաժնի պահպանումը անհրաժեշտ է:

Անհրաժեշտ է պահպաննել նաև կենտկոմի գոլրոցական
բաժինը այն կապակցությամբ, վոր մեզ մռա չկա միութե-
նական կուսադրկոմատ, և այն կապակցությամբ, վոր բո-

լոր հանրապետություններում, յերկրամասերում ու մար-
դրում անհրաժեշտ է ժողովրդական կրթության աշխա-
տանքի դրվագները վերահսկողության յենթարկել:

Մարզկոմներում, յերկրկոմներում և ազգային կոմիու-
տակցությունների կենտկոմներում պետք է ստեղծվեն կաղ-
երի, ոլրոպագնդայի ու աղիտացիայի, կազմակերպական-
համանդչական և գյուղատնտեսական բաժիններ: Մնացած
բոլոր արտադրական-ճյուղային բաժինները պետք է վե-
րացվեն:

Երջկոմներում և քաղկոմներում անհրաժեշտ է ունենալ
կաղերի, ոլրոպագնդայի ու աղիտացիայի և կազմակեր-
պական-համանդչական բաժիններ:

Մարզկոմներում, յերկրկոմներում և ազգային կոմիու-
տակցությունների կենտկոմներում ոլրոպագնդայի ու
աղիտացիայի բաժինների և կաղերի բաժինների զեկավա-
րությունը պետք է զբարձր քարտուղարների վրա:

Յես կարծում եմ, ընկերներ, վոր այն բանից հետո,
ինչ արդեն յես ասացի կաղերի ընտրության և կատա-
րումն ստուգելու գործի խնդիրների վերաբերյալ, ինչուս
նաև ոլրոպագնդիստական աշխատանքի խնդիրների վերա-
բերյալ, —կարիք չկա պատճառաբանելու կենտկոմի և տե-
ղական կուսակցական որգանների ապարատի այն ստրուկտու-
րան, վորն առաջարկվում է կուսակցության XVIII համա-
դրումարի քննարկմանը, թույլ կտա ապահովել մեր աշխա-
տանքի տարբեր ճյուղերի կուսակցական զեկավարության
ամրապնդումը:

* * *

Սոցիալիստական տնտեսության արագ վերելքի, բան-
վորների, զյուղացիների և ինտելիգենցիայի քաղաքական
ու կուլտուրական արագ ամման պայմաններում խիստ
բարձրացել և կուսակցական և պետական կյանքի տեմպը:
Պետական և կուսակցական դարձերի զեկավարությունն
իրականացնելու համար, կյանքի առաջ քաշած հաբցերին

արագ արձագանդելու և հասունացած հարցերը ժամանակին լուծելու համար անհրաժեշտ ե կուսակցության կենտրոնական կազմակերպությունների գոյություն ունեցող սխեման—կուսակցության համադումար, Համեկ(բ)կ կենտկոմ—լրացնել նոր որդանով՝ համամիութենական կուսակցական կոնֆերենցիայով։ Այդ առավել ևս անհրաժեշտ է, վոր կուսակցության համադումարների միջև ընկած մեծ ժամանակամիջոցը սահմանափակում ե կուսակցության աշխատողների աճած կաղըրերին զեկավար աշխատանքի և մասվանդ Համեկ(բ)կ կենտկոմի մեջ առաջ քաշելու հնարավորությունը, իսկ կոնֆերենցիան կկարողանար կուսակցությանն այդպիսի հնարավորություն տալ։ Այդ կազմակցությամբ հասունացել և կուսակցության կենտրոնական կազմակերպությունների սխեման—կուսակցության համառութենական կոնֆերենցիայով լրացնելու անհրաժեշտությունը, կոնֆերենցիա, վորը հրավիրվելու յետ տարեկան վոչ պակաս քան մեկ անդամ՝ տեղական կազմակերպությունների ներկայացուցիչներից, այն հաշվով, վորպետի Համամիութենական կոնֆերենցիայի զվարպոր խնդրը համարվի կուսակցության քաղաքականության հասունացած հարցերի քննարկումը։

Կուսակցության Համամիութենական կոնֆերենցիային հարկավոր ե տալ կենտկոմի անդամների մի մասին փոխելու, այսինքն՝ կենտկոմի այն առանձին անդամներին, վորոնք չեն ապահովում իրենց, վորպետ կենտկոմի անդամների, պարտականությունների կատարումը, կենտկոմի կազմից հանելու և նրանց նոր անդամներով փոխարինելու իրավունք, բայց կուսակցության համադումարի ընտրած կենտկոմի կազմի վոչ ավելի քան մեկ հինգերորդի քանակով։ Կոնֆերենցիան կենտկոմի անդամների կազմը լրացնում է կուսակցության համադումարի ընտրած թեկնածուների թվից և դրանց փոխարեն ընտրում է կենտկոմի անդամության նոր թեկնածուների համապատասխան քանակություն։

Կոնֆերենցիայի վորոշումները, բացառությամբ կենտկոմի նոր անդամների և կենտկոմի անդամության նոր թեկնածուների ընտրության մասին վորոշումից, վոր Համեկ(բ)կ

կենտկոմի հաստատության կարիքը չի գեռում, յենթակային Համեկ(բ)կ կենտկոմի հաստատությանը։ Կոնֆերենցիայի՝ Համեկ(բ)կ կենտկոմի կազմից հաստատված վորոշումները պարտադիր են կուսակցական բոլոր կազմակերպությունների համար։ Կոնֆերենցիայի դելեղատներն ընտրվում են մարզպետների, յերկրկոմների և աղդային կոմկուսակցությունների կենտկոմների պլենումներում։ Կենտկոմի անդամները, յեթե նրանք տեղական կազմակերպությունների կողմից լիազորված դելեղատներ չեն, կոնֆերենցիայի աշխատանքներին մասնակցում են խորհրդակցական ձայնի իրավունքով։

ԱՐՏԱՐԱԿԱՆ ՅԵՎ ԽՈՐՃԱՑԻՆ ՍԿԶԲՆԱԿԱՆ ԿՈՒՍԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ընկերներ:

Անցած ժամանակաշրջանում ամրապնդվեցին սկզբնական կուսակցական կազմակերպությունները, վորոնք հանգիստանում են մեր կուսակցության հիմքը, բարելավվեց նրանց կապը մասսաների հետ, բարձրացավ կոմունիստների ավանդարդային դերը, բարձրացավ կուսակցական կյանքի մակարդակը։ Կուսակցական կազմակերպություններն ավելի մոտեցան սոցիալիստական շինարարության տնտեսական և կուլտուրական պրակտիկ հարցերին։

Փորձը ցույց տվեց, վոր կուսակցական կազմակերպությունների հաջող աշխատանքն ապահովված եր այնտեղ, վորտեղ սկզբնական կուսակցական կազմակերպությունները կարողացել են կուսակցական-քաղաքական աշխատանքը զուգակցել արտադրական պլանների հաջող կատարման համար, պետական ապարատի աշխատանքը բարելավելու համար, նոր տեխնիկայի յուրացման համար, աշխատանքային կարգապահության ամբաղջման, ստախանովյան շարժման ծավալման, կուսակցական-տնտեսական աշխատանքում նոր կարգեր տուած քաշելու համար մղվող ոլայքարին։ Յեվ, ընդհակառակը, այնտեղ, վորտեղ կուսակցական կազմակերպությունները մի կողմ ենին քաշվել տնտեսությունից, իրենց խնդիրները սահմանափակելով պրոպագանդայով ու ազիտացիայով, կամ այնտեղ, վորտեղ կուսակցական կազ-

մակերպություններն իրենց վրա ելին վերցրել տնտեսության զեկալարման նրանց վոչյուղահասուրկ Փունկցիաները, փոխարինելով և դիմադրկելով տնտեսական որդաններին, — այստեղ աշխատանքն անխուսափելուրեն ընկնում եր փակուռու մեջ:

Ընկեր Ստալինը բազմից մատնացույց և արել կուսակցական-քաղաքական և տնտեսական աշխատանքը ճիշտ գուշակցելու անհրաժեշտությունը: Դեռևս 1923 թվականին նա ասում եր.

«Անհրաժեշտ և մեր արտադրական բջիջները ներդրավել ձեռնարկությունների և արեսոների գործերի ընթացքի հետ կապված հարցերի շրջանը: Անհրաժեշտ և զործն այսպէս դնել, վորպեսզի բջիջներն երազեկ լինեն մեր ձեռնարկությունները և միավորումները կառավարող որդանների աշխատանքին, վորպեսզի նրանք կարողանան ազդեցություն ունենալ այդ աշխատանքի վրա: Դուք, վորպես բջիջների ներկայացուցիչներ, զիտեք, թե անկուսակցական մասսաների առաջ վորքան մեծ և մեր արտադրական բջիջների բարոյական պատասխանատվությունը ձեռնարկության գործերի ընթացքի համար: Վորպեսզի բջիջը կարողանա զեկալարել և իր հետեւց տանել գործարանի անկուսակցական մասսան, վորպեսզի նա կարողանա պատասխանատվություն կրել ձեռնարկության գործերի ընթացքի համար, իսկ նա ձեռնարկության ճեղքվածքների համար անպայման բարյական պատասխանատվություն կրում և անկուսակցական մասսաների առաջ, — նա պետք է իրազեկ վնի այդ գործերին, նա պետք է հնարավորություն ունենա այսպես թե այսպես ազդելու այդ գործերի վրա: Ուստի անհրաժեշտ և, վորպեսզի բջիջները ներդրավեն ձեռնարկության հետ կապված տնտեսական հարցերի քննարկմանը, վորպեսզի ժամանակ առ ժամանակ հրավիրվեն արեսուի կազմի մեջ մըսնող ձեռնարկությունների բջիջների ներկայացուցիչների անտեսական կոնֆերենցիաներ՝ արեսուի դոր-

ժերի հետ կապված հարցերը քննարկելու համար: Դա ճիշտ ուղիներից մեկն ե, վորն անհրաժեշտ ել ինչպես կուսակցական մասսաների տնտեսական փորձի հարստացման, այնպես ել վարչից վերահսկողություն կազմակերպելու համար»:

(Ի. Ստալին: Կուսակցության խնդիրների մասին: «Ապօղիցիայի մասին» ժողովածու, եջ 24):

Մատնացույց անեմ թեկուզ և այնպիսի գիզանտի կուսակցական կազմակերպության փորձը, վորպիսին լինիս գրադի Կիրովյան գործարանն ե: Տրոցկիստական-բուխարինական բանդիտները, վորոնք մի ժամանակ կանգնել ելին գործարանի զեկավարության գլուխ, մեծ վնաս հասցըին գործարանին, նրան հասցըին այնպիսի վիճակի, վոր 1937 թվականի կեսերին գործարանը բազմաթիվ առաջադրություններում ծրագիրը կատարում եր հազիվ 45—50 %-ով:

Այժմ գործարանը զեկավարում են գործարանային տեխնիկական ինտելիգենցիայի շարքերից, ստախանովականների և հարվածայինների շարքերից բարձրացած նոր մարդիկ:

Վերջին տարվա ընթացքում Կիրովյան գործարանի աշխատանքը լրջորեն բարելավվեց և այդ գործում մեծ զեր խաղաց կուսակցական կազմակերպությունը և նրա կուսակցական կոմիտեն, վորոնք կարողացան կուսակցական-քաղաքական աշխատանքը ճիշտ զուգակցել տնտեսական աշխատանքի հետ:

Կիրովյան գործարանի կոմունիստների պրակտիկան ցույց ե տալիս, վոր կուսակցական-քաղաքական աշխատանքի ճիշտ զուգակցումը տնտեսականի հետ՝ չի տանում դեպի միանձնյա զեկավարության սկզբունքի խախտում մի կողմից, իսկ մյուս կողմից՝ կուսակցական-մասսայական աշխատանքի մոռացում:

Այդ տեսակետից մեծ նշանակություն ուներ այն, վոր կուսակցական կազմակերպության զեկավարության բարձրացան ձեռնարկության տեխնիկան ու եկոնոմիկան լավ հմացող մարդիկ, բարձրացան գործարանի ցեխերից և առանձին տեղամասերից դուրս յեկած մարդիկ, մարդիկ,

վունք այլ պատճեն ողմբը ծախրամ ունք վունք
վորովք ամուսը կերպով կապված են բանվորների և ինժեներ-
տեխնիկական աշխատողների ամրող կուեկտիվի հետ:

Կիբովյան գործարանի կուսակցական կազմակերպու-
թյունը գործարանում համարձակ կերպով արմատախիլ
արեց թշնամական տարրերին և առաջ քաշեց նոր կաղ-
րեր-մինչև 500 լտվարույն ստախանովականների, ինչե-
ներների ու տեխնիկների, վորոնք և այժմ կառավարում են
զործարանը, և վատ չեն կառավարում:

Աւշադրությամբ վերաբերելով շարքային բանվորների
և ծառայողների աշխանդումներին, կուսակցական կազմա-
կերպությունը կարողացավ մասնակցել գործարանի մի շարք
խոշոր տնտեսական հարցերի բուժմանը: Կուսակցական կազ-
մակերպությունը գործարանում ամենակենդանի մասնակ-
ցությունն ուներ աշխատավարձի սիստեմի ուժորմին, վարչ
միասնարդությունը ինձեւ եւին: Տարիքային 100 տանցի փոխա-
ւուն այժմ գործարանում մնացել է 4, վերանայիած են հա-
բության հարաբեկոր նորմաները: Դա հսկայական նշանակու-
թյուն ունեցավ գործարանում աշխատանքի արտադրողակա-
թյուն ունեցել գործարանում աշխատանքի արտադրողակա-
թյունը ճիշտ կազմակերպելու և բարձրացնելու: Հա-
մար:

Վերջին կես տարում գործարանն արտադրական սոսա-
կաղբանքները կատարում են առանց աշխատավարձի ֆունդե-
րի գերածախիմի նոր նորմաների զդալի գերազանցումով:

Կիրովյան գործարանի կուսկոմիտեն դիրքելցիային որո-
նեց կարգ հաստատելու գործարանի ենթերթիկ տնտեսու-
թյան մեջ, թարմ մարդկանց առաջ քաշեց այդ տեղամա-
սում և պահեց կոնկրետ միջոցառումներ մշակելու: Հետևան-
քըն այն եր, վոր գործարանը պատվով զլուխ բերեց կառա-
վարական առաջազգը 1939 թվականի գարնանցանի հա-
մար տրակտորների արտադրությունը կրկնապատկելու մա-
սին:

Առամի ուրիշ որինակ: Յարուավելի նետինի կոմբինա-
տուր 7 տարի չեր կատարում արտադրական ծրագիրը: Ռե-
տինի կոմբինատի վատ աշխատանքը, վորի դեկավարության
մեջ ժամանակ իրցիւ եյին ժողովրդի թշնամիները՝
զդում եր ամրող յերկիրը:

Համեր (բ) կ կենտկոմը Ռետինի կոմբինատի բուշերին
ոգնեց՝ մերկացնելու և ջախջախելու ժողովրդի թշնամինե-
րին և պահանջեց ամենակարճ ժամկետում Ռետինի կոմբի-
նատը դուրս բերել յերկրի առաջավոր ձեռնարկությունների
շարքը: Ռետինի կոմբինատի կուսկազմակերպությունը
պատվով կատարել Համեր (բ) կ կենտկոմի ցուցումները: 1938
թվականի Խ յեռամսյակում ավտոշները արտադրելու
պլանը կոմբինատը կատարեց 100%-ով 1939 թվականի
չունվարին՝ 106%-ով, իսկ փետրվարին՝ 108%-ով: Տնտե-
սական հաջողությունների հետ միասին աճել են նաև կու-
սկական կազմակերպությունը: Չորրորդ յեռամսյակում
Ռետինի կոմբինատի կուսկազմակերպությունն ավելի յե-
տածել քանի նախորդը: 2 տարվա ընթացքում:

Ինչի՞ վրա յեն հիմնված Ռետինի կոմբինատի կուսկազ-
մակերպության հաջողությունները: Նրանք չիմնված են
կուսկազմակերպության տնտեսական և քաղաքական աշխա-
տանքը ճշշտ գուգակեցնու վրա: Ռետինի կոմբինատի կուս-
կազմակերպությունը այնպես ե կառուցել իր ախտանիքը,
վոր արտադրական ծրագրի կատարման խնդիրը բարձրաց-
ված ե քաղաքական մեջ խնդիրի մակարդակի, և դրանով
գաստիարակմել ե Ռետինի կոմբինատի ամրող կուեկտիվը:
Կուսկազմակերպությունը այնպես ե կարողացել դասավորել
կուսկացական կաղըրերը, վոր նրան հաջողվել ե ստույչ
խմանալ, թե ի՞նչ ե կատարվում ձեռնարկության ամեն մի
տեղամասում: Համեր (բ) կ շրջկոմը և կուսկազմակերպու-
թյունը չեն փոխարինել անտեսական զեկավարությանը:
Ավելին, ստեղծվել են բոլոր անհրաժեշտ պայմանները տրն-
տեսվարների ինքնուրույնությունը և նախաձեռնությունը
ցուցարելու համար, բայց կուսկազմակերպությունն իրա-
գել ե յեղեւ դիրեկցիայի յուրաքանչյուր քայլին և Հարկա-
գոր մոմենտներին, լավ իմանալով տնտեսական գործերի
միջակը, ուղղություն ե տվել, սովորեցրել, ողնել ե տնտե-
սական զեկավարությանը:

Սուր կերպով քննադատելով թափթփությունը և
անպատճառատիպությունը, վորոնք յերկար յամանակ
պատվաստվել ենին ժողովրդի թշնամիների հօղմից, կուս-

Առաջակերպությունը թե՛ բարոյազես և թե՛ քաղաքականա-
տի ոժանդակել ե յուրաքանչյուր անտեսական դեկավարի,
յուրաքանչյուր բանվորի ու ծառայողի, վորոնք ազնվորեն
են աշխատել էոմբինատում:

Կիրովյան գործարանի և Յարոսլավլի Ռետի-
նատի որինակների նման որինակներ կարելի յե բերել տաս-
նյակներով ու հարյուրներով: Մոսկվայի Վալիբրը գործա-
րանը և Ժամացույցի առաջին գործարանը. մի ամբողջ շարք
ավիացիոն գործարաններ. մի շարք մետալուրգիական գոր-
ծարաններ. Խարկովի «Ավետ շախտյորա» գործարանը. Գոր-
կու մարզի Նովոյե Սորմովո գործարանը և բազմաթիվ
ուղիւ ձեռնարկություններ նույնական տալիս են սկզբնական
կուսկազմակերպությունների կյանքում կուսակցական և
տնտեսական աշխատանքը ճիշտ զուգակցելու որինակներ:

Բոլոր հանրապետություններում, յերկրամասերում և
մարզերում քիչ կուսկազմակերպություններ չեն գտնվի, վո-
րոնք կարողացել են ճիշտ վերաբերմունք հաստատել դեպի
անտեսության հարցերը, կարգավորել վերահսկողությունը
արտադրության գործերի վիճակին և ողնել տնտեսվարնե-
րին՝ կատարելու ու վերակատարելու ծրագիրը:

Մատնացույց անեմ, այնուհետև, պաշտպանական գոր-
ծարանների՝ կինտկոմի կուսկազմակերպիչների փորձը: Այդ
արցին բացառիկ նշանակություն և տալիս ընկեր Ստալինը:
Ընկեր Ստալինն առաջարկեց պաշտպանական գործարաննե-
րում առաջմանել կինտկոմի կուսկազմակերպիչների ինստի-
տուտ և վորպես կուսկազմակերպիչներ ուղարկել իրենց
գործի մասնաշետ լավ կուսակցական վորակյալ ինժեներ-
ներ: Այդ միջոցառումն ամբողջությամբ արդարացրեց իրեն
և բացառիկ արդյունքներ տվեց: Պաշտպանական գործարան-
ներում ստեղծվեց աշխատաղների մի նոր տիպ, վորոնք կու-
սակցական աշխատանքը զուգակցում են այս կամ այն աշն-
տեսական կամ տեխնիկական հարցն ստուգելու հմտության
հետ:

Հայտնի յե, վոր վորոշ կուսակցական աշխատաղների
տղիտությունը տեխնիկական և տնտեսական հարցերում՝ ձե-
ռնատու յեր վնասարարներին: Մեր սկզբնական կուսակցա-
կան կուսկազմակերպությունները մեր ձեռնարկությունների

առաջավոր ջոկատն են, մեր ձեռնարկությունների ծալիկն:
Անհրաժեշտ ու ոգտագործել այդ առաջավոր շերտի տօրող
փորձը, վորապիսին հանդիսանում են ձեռնարկությունների
կոմունիստները: Այս կամ այն պատասխանառու պատվերի
կատարման, դիրեկտորական Փոնդի ծախսման, բանվորա-
կան հանրակացարանների գրության, բանվորական ճաշա-
րանների գրության գործի վիճակն ստուգելու համար հար-
կավոր և կշեռքի նժամբի վրա զնել կուսակցական կազմակեր-
պությունների ամբողջ փորձը, բոլշևիկյան լուսարձակով
լուսավորել ձեռնարկության արտադրական կյանքի բոլոր
կողմերը: Դրանով մենք հսկայական ոգնություն ցույց
կանք անտեսական սոցիալիստական շինարարության ամ-
բողջ գործին:

Դիսկուսիայի ժամանակ ձայներ յեղան, վոր, երբ թէ,
արտադրական սկզբնական կուսակցական կազմակերպու-
թյուններին վերահսկողության իրավունք տալը հարված և
միանձնյա զեկավարությանը: Ինձ թվում ե, վոր այն մո-
դեկի, վորոնք գտնում են, վոր միանձնյա զեկավարությունը
կայանում և նրանում, վոր հրամանատարություն արվի
գործարանում, առանց ակտիվի վրա հենվելու, —վոչիչ չեն
հասկանում միանձնյա զեկավարությունից:

Մեր խորհրդային, բոլշևիկյան միանձնյա զեկավարու-
թյունը կայանում և կարգադրություններ անելու հմտու-
թյան մեջ, գործը կազմակերպելու, կադրեր ընտրելու,
ճիշտ դիրեկտիվ տալու, հաշվետվություն պահանջելու, ան-
պատմականատվությունը և դիմացրկությունը վերացնելու
հմտության մեջ: Բայց դա գրա հետ միասին նշանակում է
այդ աշխատանքում կուսկազմակերպության վրա, ձեռնար-
կության ակտիվի վրա, ձեռնարկության ամբողջ կոլեկտիվի
վրա հենվելու հմտություն:

Ուստի և սխալ են այն դաստողությունները, թէ կարելի
յե մի կերպ յուլա դնալ առանց սկզբնական կուսակցական
կազմակերպությունների վերահսկողության: Վորոշ աշխ-
տեսականներ զուր են վախենում այդպիսի վերահսկողությու-
նից:

Այդ կապակցությամբ հասունացել ե զանազան արակե-

սկզբնական կուսակցական կազմակերպությունների խնդիրներն ավելի ճշգրիտ վորոշելու անհրաժեշտությունը և, մասնավորապես, այնպիսի սկզբնական կուսակցական կազմակերպությունների, ինչպես արտադրության (ֆարմիտ, գործարան, խորհանութեառություն, կոլտնտեսություն) կուսակցական կազմակերպությունը և ժողկոմատի կուսակցական կազմակերպությունը:

Արտադրական ախպի կուսակցական կազմակերպությանը պետք է տրվի ձեռնարկության, խորհանութեառության և կոլտնտեսության գործերի վիճակին վերահսկելու իրավունք: Այդ պետք է հայցնի արտադրության սկզբնական կուսակցական կազմակերպությունների դերի և պատասխանատվության ուժեղացմանը:

Ինչ վերաբերում է ժողկոմատային տեղի կուսակցական կազմակերպություններին, ապա նրանք իրենց աշխատանքի սպեցիֆիկ պայմանների հիմքունքով՝ վերահսկողության փունկցիաներ չունենալով, պետք է ուժեղացնեն իրենց գերն ասլարատի աշխատանքը բարելավելու դործում: Նրանց պարտականությունն եւ—ահազանգել այս կամ այս ժողկոմատի բացերի մասին, նշել առանձին աշխատողների թերությունները և այդ մասին հաղորդել կենտրոմ ու ժողկոմատի դեկապարներին:

Ըսկեր Ստալինը 1926 թվականի մարտի 15-ին հենուկոմի կազմը յուրոյի նիստում, վորոշելով խորհրդային բջիջների խնդիրները, ասում եր,

«Վորաբեսովի մեր խորհրդային բջիջները մնուի խորհրդային կարգ ու կանոն սպահանողները մեր հիմնարկություններում... Բջիջները պետք է հետևեն, վորաբեսովի խորհրդային հիմնարկություններում, պետական թե տնտեսական, վորաբեսովի նրանց մեջ լինի թեկուզ և տարրական կարգ ու կանոն, ուարդական կարեկցություն, մարդկանց լսելու պատրաստակամություն, վորքան կարելի յի քիչ բրուրկատափակմ լինի... Հարկավոր է հասնել այն բանին, վորխորհրդային բջիջն ապրի ամբողջ կուսակցության կայականով: Վոր նա կուսակցության ողնի բարելավելու

լու, ավելի պարզացնելու և բնակչությանը մոռեցնելու խորհրդային և տնտեսական ապարատը, այն դարձնելու ազնիվ ու խայողական»:

(Տե՛ս «Հայության ԱԿ ՎԿՊ(Յ)» № 16—17, 1926 թ.):

Այս կամ այն ժողկոմատում աշխատող բոլոր կուսակցամբները պետք է միավորվեն ընդհանուր—ժողկոմատային կուսակցական կազմակերպության մեջ: Ժողկոմատի սկզբնական կուսակցական կազմակերպության քարտուղարը պետք է հաստատվի Համկ(ր)կ կենտրոնի կողմից: Այս վերջին միջոցառման անհրաժեշտությունը, ընկերներ, հաղիկ թե ընդարձակ պատճառաբանության և փաստարկման կարեք պահանջման համար կազմակերպությունների վերաբերյալ այս ինքնին հասկանալի յէ:

Համկ(ր)կ կենտրոնի կողմից այս համար առաջարկությունը պահպանվել է ՅԵՍ շարադրեցի Համկ(ր)կ կանոնադրության այս հիմնական ուղղումները, վորոնք առաջարկված են թեզիներում:

Բացի այս ուղղումներից և լրացումներից, անհրաժեշտ են շենչելնակ կուսակցական փորձից բոլիող լրացումները՝ մարդկոմներում և յերկրկոմներում 4—5 քարտուղարներ ունենալու անհրաժեշտության, կուսակցության ոկրուզային կազմակերպություններին կանոնադրական իրավունքներ ստալու, կարմիր բանակի կուսակցմակերպությունների վերաբերյալ կանոնադրական գրաւելը նաև մազմա—ծովային նավատորմի կուսակցմակերպությունների վրա տարածելու մասին: Այդ լրացումները, ըստին, բացատրությունների կարիք չեն զգում:

Ի վորփիստմն գոյություն ունեցող գրության առաջարկումն և սկզբնական կազմակերպությունների ընտրությունների այսուհետեւ անվանել վոշ թե կուսակցմակերպությունների կոմիտեներ, այլ բյուրոներ:

Այս փոփոխությունը ողիսում և այն բանից, վոր կոմիտեներ կազմակերպում են այնտեղ, վորտեղ միացվում են միքանի լիիրավ կուսակցմակերպությունների: Այս և մեր կայակցության արագիտան, վորքան համապատասխանում են կայակցության արագիտան, վորքան համապատասխանում են դորձի շահերին: Ակզբնական կուսակցական կազմակերպությունների

թյունների ընտրովի որգաններն ել, և տարբերություն կոմիտեներից, նպատակահարմար և անվանել բյուրոներ:

Կենտկոմը մեծ նշանակություն և տալիս նմանապես ցեխային կուսակցական կազմակերպություններին, վորոշայմաններում, այսինքն՝ վոչ պակաս քան 15 կուսանդամ ունենալու դեպքում, ցեխային կուսակզմակերպության բյուրո ընտրելու իրավունք տալուն: Դուք դիտեք, վոր խոշորագույն գործարաններում կենտկոմի վորոշմամբ ստեղծված են ցեխային կոմիտեներ: Նրանց աշխատանքի փորձն ամբողջությամբ արդարացավ:

«ՀԱՍԿ(Բ)Կ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ ԿԱՏԱՐԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԶԵԿՈՒՑՄԱՆ ԹԵԶԻՍՆԵՐԻ ՇՈՒՐՉԸ ԾԱՎԱԼՎԱԾ ԴԻՍԿՈՒՍԻԱՅԻ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Անցնում եմ այն ուղղումներին և փոփոխություններին, վորոնք մտցվեցին Համկ(բ)կ կանոնադրության փոփոխությունների մասին զեկուցման թեզիսները կուսակցական կազմակերպություններում քննարկելիս:

Թեզիսների չուրջը ծափալվեց լայն դիսկուսիա: Դիսկուսիայի հետևանքով թեզիսները հավանություն ստացան կուսակցության անդամների ճնշող մեծամասնության և բոլոր կուսակցական կազմակերպությունների կողմից: (Բուռն ծափակարություններ):

Թեզիսների քննարկումը տվեց բավական մեծ քանակությամբ ուղղումներ ու լրացումներ ինչպես հենց թեզիսների, այնպես և ներկայումս գործող կանոնադրության մի շարք այլ պարագրաֆների վերաբերյալ, վորոնց մեջ թեզիսները փոփոխություններ չելին նախատեսում:

Նկատի ունենալով ուղղումների մեծ բազմազանությունը, դրանք պետք է բաժանել միքանի կատեղորիաների:

Կան մի շարք դատարկ ուղղումներ, վորոնք չունեն վորուել պրակտիկ արժեք: որինակ՝ կուսորդանների ընտրությունները կատարել 5 տարին մեկ անգամ: կուսակզմակեր-

պությունների քարտուղարների ընտրությունները կատարել ընդհանուր ժողովներում, և վոչ թե կոմիտեների կամ բյուրոների կողմից, այսինքն՝ քարտուղարին դարձնել կոմիտեյից կամ բյուրոյից անկախ: կուսակցության մեջ ընդունելությունը կատարել հանդիսավոր ժողովներում և այլն:

Այս ուղղումները և լրացումներն իրենց դեմ են խոսում և վոչ մի անհրաժեշտություն չկա բանալիճելու գրանց դեմ: Դրանք վերանում են ինքնըստինքյան, վորովես դատարկ բաներ: (Ծիծաղ: Ծափակարություններ):

Եթերկրորդ՝ կան մեծ թվով ուղղումներ, լրացումներ և դիտողություններ, վորոնք ուղղակի առնչություն չունեն Համկ(բ)կ կանոնադրության հետ, այլ վերաբերում են կուսակցական-կազմակերպական ընթացիկ աշխատանքին:

Դրանք են, որինակ, Հնգորյակիում ամեն տեսակ ժողովներից ու խորհրդակցություններից աղատ առնվազն 3 յերեկո առանձնացնելու մասին առաջարկները, վորովեսի ընկերները կարողանան թե՛ հանդատանալ, թե՛ թերորիայով գրադաւել: կուսակցական որեր անցկացնելու մասին, հարցման կարգով վորոշումներ կայացնելն արգելելու մասին առաջարկները. շրջանային սակալամարդ կուսկազմակերպություններում չըջկոմների բյուրո ընտրելու մասին, տրակտորիստներին և կոմքայնավարներին ՄՏՀ-ների կուսակազմակերպություններում հաշվառման փոխադրելու ժամանակներին, հանդուցային յերկաթուղարյին կուսակցական կոմիտեները լիկվեդացիայի յենթարկելու մասին և այլն և այլն:

Այս բոլոր ուղղումների և առաջարկների թեմաները, ինչպես տեսնում եք,—կուսակցական շինարարության միքանի պրակտիկ հարցերն են: Այս ուղղումների հեղինակները, ըստ յերեսությն, չեն պարզել իրենց համար կանոնադրական հարցերի և կուսակցական ընթացիկ աշխատանքի հարցերի միջև յեղած տարբերությունը, ուստի աշխատում են կանոնադրության մեջ խցկել վորքան կարելի յե ամելի շտատ ամեն տեսակի լրույթներ, մոռանալով, վոր կանոնադրությունը տալիս և միայն ընդհանուր շրջանակները, կուսակցության կազմակերպական գործունեյության հիմնական մեջերը և վոր կանոնադրությունը չե բացառում, այլ ընդ-

Հակառակը, յննթաղրում և կուսակցական որդանների ընթացիկ գործունեյությունը:

Համկ(բ)կ կանոնադրությունը, վորը կհաստատի կուսակցության ԽVIII համագումարը, կազմակերպական հիմք և տալիք կուսակցական ղեկավար որդանների ապագա ԴՐԾՆԱԿՈՒԹՅԱՆ համար: Այդ տեսակի ուղղումներն ու լրացրմանները պետք ե ուղղվեն Համկ(բ)կ կենակոմի նոր կազմին՝ ի քննարկում:

Ուղղումների յերբորդ խումբն ուղղակի առնչություն ունի Համկ(բ)կ կանոնադրության հետ: Այդ ուղղումների գործի մասն ունի խմբագրական բնույթ և կարող ե հանձնվել ԽVIII համագումարի կանոնադրական հանձնաժողովներին, վորպիսին, յես կարծում եմ, համագումարը կրուենդի, հանձնարարելով նրան առհմանել կուսակցական կանոնադրության մերջնական խմբագրումը:

Ինչ վերաբերում է եյական նշանակություն ունեցող ուղղումներին և լրացրմաններին, ապա դրանք նպատակաշարմար և բաժանել յերեք կատեգորիայի—անընդունելի ուղղումներու լրացրմաններ, վորոնք անհրաժեշտ և մերժել ուղղումներ ու լրացրմաններ, վորոնց նպատակահարմարությունն անհրաժեշտ է վեհափետական յենթաքիների համապետարում, և վերջապես, ուղղումներ ու լրացրմաններ, վորոնք անհրաժեշտ և ընդունել:

Կանոնական անընդունելի առաջարկների վրա:

1. Ուղղումներ, վորոնք նկատի ունեն ընդունելության կատեգորիաների այս կամ այն ձևով պահպանումը: Այսուղեամբ ամենաբազմապիսի առաջարկները: Դրանք բոլորը յեւնում են այն բանից, վոր զանազան կատեգորիաների վոչընչացումը, չեղինակների կարծիքով, անժամանակ և: Առաջարկում են սուհմանել 2 կամ 3 կատեգորիա մեջ՝ բանախորհների համար, մյուսը՝ դյուզացիների և ինտելեկտիվի համար: Կամ թե սուհմանացնել հատուկ կատեգորիա՝ չին ինտելեկտիվի համարի համար, կամ թե սուհմանացնել հատուկ կատեգորիա՝ չին ինտելեկտիվի համարի:

Այդ ուղղումների տարրերիչ դիմում այն է, վոր դրանց հեղինակները կամ անփեսում են, կամ թե իրենց համար չեն

պարզել դասակարգերի փոխհարաբերությունների մեջ տեղի ունեցած այն արմատական փոփոխությունների ելությունը: Վորոնք կատարվել են ԽՍՀՄ-ում: Երանք կամ կառչում են չնին, չտեսնելով նորը, կամ պարզապես քնած են մեռելի քնով և չեն նկատում, թե չուրջն ինչ ե կատարվում: (Սա փահարություններ):

2. Կան ուրամագումներն հակառակ տիտիր մի շարք ուղղումներ, վորոնք ավելի ճեղուն են գնում կուսակցության մեջ ընդունելությունը կարգավորող այն նորմաններից, վորոնք առաջարկվում են թեզիսներում: Յեթե ուղղումների առաջին խումբը, ինչպես մենք հենց նոր անսանք, առաջարկում ե պահպանել ընդունելության հին պայմանները, առաջ ուղղումների մյուս խումբը առաջարկում ե զգալիորեն առաջնական նորմաններից, վորոնք առաջարկված են թեզիսներում: Առաջարկում են, որինակ, թիկնածուական ստածը սահմանել վոչ թե մեկ տարի, այլ օ ամիս, և ամիս և նույնիկ Յ ամիս: Վերացնել կուսակցական ստածը յերաշխավուրուների թիվը և այլն և այլն: Յես կարծում եմ, վոր նման ուղղումները բըղիսում են նրանից, վոր մեր կուսակցության բնույթի հարցը կուսակցության առանձին անդամներ չեն ըմբռնում, և վկայում են, վոր կուսակցության վորոշ անդամներ մոռացության են տվել այն հիմնական գրույթը, վոր մեր կուսակցության ուժը վոչ թե նրանում և, վոր վոչնչացնենք ստածաները կուսակցության և վոչ-կուսակցության միջև, կուսակցականների միջև և ձուլելով, լուծվել մասամբի մեջ, այլ նրանում, վոր կուսակցությունը, հանգիստացնելով բանվոր զանակարգի, դյուզացիության, ինտելեկտիվի համարի առաջարկոր մարդկանց հավաքակայանը, չի վազում անդամների քանակի հետեւից, այլ հոգ և տանում նրանցին մասին, կուսակցության անդամների բարձր կոչման մասին, նրանց կայունության և բանվոր զանակարգի դրամական մասին: Այդ առաջարկները չեղինակների հետեւ համար ուղղումների հեղինակները յենում են անընդունելությունը և այլու պատկերացումից, վոր իր կուսակցությունը այլեւ ժամանելով չեն հող տանելու իր անդամների վրանի մասին և ամենի մասին:

դոները լայնորեն բաց և անում բոլորի համար, սվ վոր կը ցանկանա նիրա մանել: Այսպիսի սխալ հայացքներն ընդհանուր վոչինչ չունեն իրոք առաջավոր աշխատողներին խլատորեն անհատական կարգով կուսակցության շարքերն ընդունելու վերաբերյալ կուսակցության դրույթների հետ:

Նշանակո՞ւմ ե արդյոք, վոր կուսակցության մեջ ընդունելության կարգի եյական փոխիսությունները վորեւ շափով թուլացնում են կուսակցության մեջ անհատական ընտրությամբ ընդունելության լինինյան փորձված սկզբունքը: Վո՞չ մի դեպքում:

Կենտկոմը և ընկեր Ստալինը բազմիցս առաջելազույն պարզորոշությամբ մատնանշել են, վոր կուսակցության համար կարեոր ե վոչ այնքան անդամների քանակը, վորքան նրանց վորակը, նրանց կայունությունը: Ահա՛, որինակ, ինչ ե ասել ընկեր Ստալինը 1921 թվականի Հուլիսի Յ-ին Վլաստանի կոմունիստական կուսակցության Թիֆլիսի կազմակերպության ընդհանուր ժողովին տված իր գեկուցման մեջ.

«Հարկավոր ե մեկ ընդմիջտ հիշել, վոր կուսակցության, մանավանդ կոմունիստական կուսակցության, ուժն ու տեսակարար կշուը կախված ե վոչ այնքան անդամների քանակից, վորքան նրանց վորակեց, նրանց կայունությունից և պրոլետարիատի դործին նվիրված լինելուց»:

Խորհուրդների Համամիութենական յերկրորդ համագումարում, 1924 թվականի Հունվարի 26-ին, Լենինի մահվան տոթիվ իր մեծ յերդումի մեջ ընկեր Ստալինն ասաց.

«Ամեն մեկին վիճակված չե այդպիսի կուսակցության անդամ լինել: Ամեն մեկին վիճակված չե այդպիսի կուսակցության անդամության հետ կապված արհավիրքներին ու փոթորկներին դիմանալ: Բանվոր դասակարգի զավակները, կարիքի ու պայքարի զավակները, աներեակայելի զրկանքների ու հերոսական ջանքերի զավակները—ահա՛ թե ովքեր, ամենից առաջ, պետք ե լինեն այդպիսի կուսակցության անդամներ: Ահա՛ թե ինչու լինինյանների կուսակցությունը, կոմունիստների կուսակցությունը, դրա հետ

մեկտեղ կոչվում ե բանվոր զատակարգի կուսակցություն»:

XIII կուսակմագումարի՝ «Կուսակցական շինարարության հերթական խնդիրների մասին» բանաձևում կուսակցությունը մատնանշում եր, վոր նոր անդամների ընդունելության ժամանակ կարեոր են վոչ թե ձեւական կրիտերիումները, այլ գործի հյությունը: Այդ բանաձեկ մեջ առաջանակ մի դեպքում:

«Ընդունելության ժամանակ պետք ե պահպանվեն վոչ միայն սահմանված ձևական պարզանները, այլ նաև պետք ե ըստ եյության անպայման պարզվի կուսակցությունը նոր անդամի ընդունակությունը՝ գործով ողնելու կուսակցությանը և պըոլետարական գիկտառուրայի որգաններին»:

Կուսակցության մեջ ընդունելության ժամանակ խստօքն անհատական մոտեցման այս սկզբունքը հանդիսանում ե մեր կուսակցության անխախտ որենքը և յենթակա չե փոփաման:

Կուսակցության կենտրոնական կոմիտեն կուսակցության XIXII և XIXIII համագումարների միջև ընկած ժամանակաշրջանում բազմիցս մատնանշել ե կուսակցության մեջ անհատավես ընդունելության սկզբունքը մոռացության տալու վանդակությունը:

Խորթ, թշնամական տարբերը, միշտ ձգտել են մտնել Համկ(բ)կ շարքերը, վորպեսզի կուսակցության անդամի կոչումով քողարկվելով՝ քայլքային բանվոր զատակարգի մեծ գործը:

Կուսակցության կենտրոնական կոմիտեն վիթխարի աշխատանք և կատարել կուսակցության մեջ անհատավես ընդունելության սկզբունքների խախտման զեմ պայքարելու ուղղությամբ:

Կուսակցության կենտրոնական կոմիտեն վճռականորեն պայքարել ե լինինի այն ցուցումը մոռացության տալու փորձերի դիմ, վոր աշխարհում միակ մեր կուսակցությունը և միայն հոգ տանում վոչ թե անդամների թվի ավելացման մասին, այլ նրանց վորպի բարձրացման մասին:

Կուսակցության կենտրոնական կոմիտեն կուսակցական կազմակերպություններին խսորեն նախազդուչացնում եր և նեղաթյուրման և սկսակները կրկնելու վտանգի մասին, կու հակցության շարքերն աւշի-ուշով, անհատական ընտրությամբ, ընդունելությունը կուսակցության մեջ ընդունելու թյամբ, ընդունելությունը կուսակցության մեջ ընդունելու թյամ վասակար, հախուռն կամ պահայով փոխարինելու վտանգի մասին, մի բան, վորը Համեկ(բ)կ շարքերն աղբում եր խորթ, թշնամական տարրերով:

Կուսակցական փաստաթղթերի ստուգումը և փոխանա կումը բացառիկ թափթափածությունը ու քառո յերեան բե քին այդ տեսակետից: Այստեղից պարզ է, վոր մեր յերկը բանվարներից, զյուղացիներից ու աշխատավոր ինտելիցի ցիստից յեկած իրոք պաշտպան, բանվոր գարավարդի գործին իրոք նվիրված, լավագույն մարդկանց կուսակցության մեջ անհատական ընդունելությամբ ընդունելու պարունքը, — այն մարդկանց, վորոնք ստուգած են սպառավոր մարդկանցից, մզվալ պայքարի զանազան ճակատամասերում, մարդկանց, վորոնք չեն վախենում դժվարությունների առջև, այլ կոփ վում են դժունց դեմ մզվալ պայքարամ՝ յեզել ե, ե՛ և մնում ե, մեր կուսակցության վճռազական սկզբունքը կուսակցության մեջ ընդունելության հարցի բաժման ժամա նակառ վարչությունուն զայտուրքի մասեւ ուղարկելու սկզբանական դաշտում:

Դրա հետ միասին, կուսակցությունը շահագրգույն և սակագույն բարձր, հարավորաւթյունները, վորդեսքի իրոք ստաջավոր մարդկի մասնեն նրա շարքերը: Կանոնադրության մեջ նշվող փոփոխություններն իրոք ստեղծում են այդ հարավորությունները:

3. Մի շարք ընկերներ առաջարկում են հատուկ կատե ղորիա սահմանել անցյալում կուսակցության մեջ յեղած անձերի համար: Ինձ թվաւմ ե, վոր գրա կարիքը չեւ: Յերբե խոսքն այն ընկերների մասին ե, վորոնք կուսակցությունից գուրս գտնված ժամանակի ընթացքում իրենց ցույց են տվել վորպես նվիրված ու ակտիվ աշխատողներ, ապա նրանց կարելի յե ընդունել նույնպիսի հիմունքներով, ինչ պես վոր ընդունվում են բոլոր նոր ընդունվող ընկերները: Իսկ յեթե այդպիսի մարդիկ կուսակցությունից դուք

զունված ժամանակի ընթացքում չեն ապացուցել իրենց նվիրվածությունը, ապա նրանք, ակներն ե, չեն ընդունելի և վոր վոր նրանց յերաշխավորություն չի տա:

4. Այսուհետեւ ուղղումներ են առաջարկվում յերաշխավորողի հետ յերաշխավորողի՝ համատեղ աշխատանքից ծանոթ լինելու մասին: Առաջարկվում են Բանվորա-Գյուղացիան կարմիր բանակի շարքերում զանովովների համար սահմանել 6 ամիս, գա պատճառարաններով կարմիր բանակի կյանքի հատուկ պայմաններով: Յես կարծում եմ, վոր մենք պետք ե մերժենք այդ առաջարկը: Նախ դա զանազան պայտ մասներ և սուղծում տերիառիալ և բանակային կուսակցական կարմական իրավունքությունների կյանքում, վորը ցանկալի չե: Երկրորդ, յերաշխավորություններ կարող են տալ այն ըն կերները, վորոնք ճանաչում են ճամատել աշխատանքից լուս միայն տվյալ ձեռնարկությունում, նմայու հիմնարկում, այլ և նրան ճանաչել են համատեղ աշխատանքից մինչ այդ, ըստվորում յերաշխավորողներից չնկատք ե պահանջմանը, վոր ըստվորության մասնակի կարող ե կու սակագույն մեջ ընդունելով ցանկացող ընկերուջ մասին հար ակցության գույն ուղղությունում կարմական կարմական իրավունքություններին, վորոնք նրան կարող են յերաշխավորել նախակին համատեղ աշխատանքից:

5. Մի շարք առաջարկներ են մտցրած կուսակցության մեջ ընդունելու իրավունք առլու ցերային կուսակցական մեջ ընդունելու իրավունք առլու կուսակցության կակմակերպություններին այն խոշոր կուսակցություններում, վորոնք ունեն կուսակցության առնվազագույն 500 թյուններում, վորոնք ունեն կուսակցության առնվազագույն կուսակցական ընդունելու իրավունք տալու մասին, անցնելով կուսակցական ընդհանուր ժողովի կողման կու քով: Առաջարկներ են մտցված նաև բոլոր ցերային կու սակագական կակմակերպություններին կուսակցության մեջ ընդունելու իրավունք տալու մասին, անցնելով սկզբական ընդհանուր ժողովի կողման կու զարգացմակերպության ընդհանուր ժողովի կողման վեցուն ընդունելու իրավունք առաջարկը: Վես կարծում եմ, վոր մենք այսակե ընդունենք չետեղալ առաջարկը.

կազմակերպություններում, վորոնք ունեն կուսակցության 500 կամ 700 անդամից ավելի (այդ մասին պետք է կարծիք ներ փոխանակել համագումարում), իրավունք տալ ստեղծելու վոչ թե սկզբնական կազմակերպության բյուրո, այլ գործարանային կոմիտե:

Միքանի ընկերներ առաջարկում եյին այդպիսի ձեռնարկություններում կազմակերպել ույսնական արտադրական կոմիտեներ: Ինձ թվում ե, վոր դա ճիշտ չե, վորովհետեւ այն ժամանակ մեզ մոտ կուտացվեն ույսների յերկու գանձական տիպ—տերիստորիալ ույսներ և արտադրական ույսներ: Այնպիսի գործարանային կուսակցական կազմակերպություններում, վորոնք ունեն կուսակցության 500 կամ 700 անդամից ավելի, նպատակահարմար և կարժակերպել գործարանային կուսակցական կոմիտեներ, այն հաշվով, վոր ցեխային կուսակցական կազմակերպություններին այդպիսի խոչը ձեռնարկություններում ուրվեն կանոնադրական իրավունք:

Ինչ վերաբերում ե բոլոր ցեխային կազմակերպություններին կուսակցության մեջ ընդունելու իրավունք տալու, այսինքն՝ կանոնադրական իրավունքները բոլոր ցեխային սկզբնական կազմակերպությունների վրա տարածելու առաջարկներին, ապա դրանք անհրաժեշտ ե մերժել, վորովհետեւ գրանք գնում են համագործարանային կազմակերպության նշանակությունը նվազեցնելու դժով: Իսկ մեր ամրոցը հանգիստանում և ամենից առաջ գործարանը և սխալ կլիներ կացարել համագործարանային կուսակզմակերպությունը, հույսը գնելով ցեխի վրա: Զի կարելի սպովի համագործարանային կուսակցական կազմակերպության դաստիարակչական դերը և համագործարանային կուսակցական ժողովի նշանակությունը՝ կուսակցության մեջ ընդունելության գործում:

6. Մտցված են մի շարք առաջարկներ կուսակցական որդաններին կից ամեն տեսակ նոր բաժիններ ստեղծելու մասին: Կենտրոնի թեղիսները, ինչպես հայոնի յե, նպատակ ունեն կրթատեղ բաժինների քանակը, ըստվորում հիմնական բաժիններ կլինեն կենտրոնի կազմակերպի վարչությունը և պրո-

պագանդայի ու աղիտացիայի վարչությունը և Համապատասխան բաժինները՝ տեղերում: Իսկ ընկերները, ընդհակառակը, գնում են դեպի բաժինների ընդարձակում, առաջարկում են հիմնել նոր բաժիններ, ինչպես, որինակ, առողջապահության բաժին, ստախանովյան շարժման բաժին և այլն: (Ծիծաղ):

Այդ առաջարկն անհրաժեշտ ե մերժել: Միայն մեկ բաժնի վերաբերյալ ե, իմ կարծիքով, հարցը վիճելի յես նկատի ունեմ պաշտպանական բաժիններ ստեղծելու հարցը, վորը պետք ե քննության առնել համագումարում:

7. Առաջարկում են կուսակցական ակտիվներին վերաբերող կետը տարածել նաև գյուղական կազմակերպությունների վրա: Յես կարծում եմ, վոր այս հարցը ևս համագումարը պետք ե քննության առնի, վորովհետեւ այստեղ կան և՛ թեր և՛ զեմ նկատառումներ:

Վորոնք են թեր նկատառումները: Դրանք հանդում են այն բանին, վոր գյուղական շրջաններում, մանավանդ խուչոր շրջաններում, միշտ չե, վոր նպատակահարմար և գումարել կոմունիտեների միայն համաշրջանային ժողովներ, վոր քաղաքների որինակով պետք ե հրավիրել նաև կուսակցական ակտիվներ՝ կուսակցական քաղաքականության ընթացիկ հարցերը քննարկելու համար: Ինչ վերաբերում ե զեմ նկատառումներին, ապա դրանք յելնում են այն բանից, վոր գյուղական շրջանների մեծամասնության մեջ կարելի յե բոլոր անհրաժեշտ դեպքերում հրավիրել կազմակերպության ընդհանուր ժողովներ: Հայտնի յե, վոր ընդհանուր ժողովներն ունեն դաստիարակչական ու կազմակերպական վիթխարի նշանակություն: Միքանի ընկերներ յերկուող են կրում, թե չլինի ակտիվները փոխարինեն կուսակցական ընդհանուր ժողովի գերը, թե ակտիվի ժողովները չպետք ե չարաշահել: Հարցը, ինչպես տեսնում եք, նպատակահարմար կլիներ վենստիլացիայի յենթարկել համագումարում:

8. Առաջարկում են բոլոր մարդկոմներում և քաղկոմներում, բյուրոների հետ մեկտեղ, ունենալ նաև քարտուղարություններ: Այս առաջարկը նույնպես համագումարում

քննարկվելու կարիք եղաւում: Կան թեր և դեմ փաստաբ-
կումներ: Թեր փաստարկումները խոսում են այն մասին,
վոր յերբ զեկավարությանն անհրաժեշտ ելուծել մեծ քա-
նակությամբ կաղմակերպական հարցեր, կարիք կա այն-
պիսի լրացուցիչ որդանի, ինչպես քարտուղարությունը:
Ամեն մի հարցի համար, ասում են, չպետք եր բյուրոն գու-
մարել: Այդ, առաջին հայացքից, շատ հրապուրիչ, պրակ-
տիկորեն նպատակահարմար առաջարկ է: Բայց մյուս կող-
մից վտանգ կա, թե քարտուղարությունների ստեղծումը չի
հասցնի արդյոք բյուրոյի դերի նվազեցման, կուեկտիվ
զեկավարության դերի նվազեցման: Այն չի հասցնի ար-
դյոք զեկավարման ծանրության կենտրոնի վորոշ փոխա-
դրման՝ բյուրոյից դեպի ավելի նեղ կոլեգիան—քարտուղա-
րությունը: Յես կարծում եմ, վոր այս հարցը ճիշտ նույն-
պիս պահանջում եքնարկության առնել համագումարում:

9. Առաջարկում են իջեցնել ստաժը կուսակցական զե-
կավար աշխատողների համար, իսկ վոմանք առաջարկում
են ընկերներին կուսակցական զեկավար պոստերի ընտրելն
առհասարակ չկապել վորևե ստաժի հետ: Յես կարծում
եմ, վոր այդ առաջարկը սիսալ է, վորովհետեւ ստաժն ան-
հրաժեշտ ե վոչ միայն վորպես ձեւական կրթություն, այլ
նաև վորպես վկայություն կուսակցական աշխատանքի վո-
րոշ փորձի առկայության մասին: Մենք չպետք ե մոռա-
նանք ընկեր Ստալինի ցուցումները՝ կուսակցության յերի-
տասարդ ու հին անդամների փորձը զուգակցելու անհրա-
ժեշտության մասին: Ուստի, կուսակցական զեկավար աշ-
խատողների ստաժի մասին կանոնադրության վորոշ կետե-
րի փոփոխման վերաբերյալ կենտկոմի թեղիսներով մտցը-
ված առաջարկը բավականաչափ ապահովում ե յերիտա-
տարդ կաղրերի առաջքաշումը և ավելի հեռուն զնալ՝ ե՛ւ
ավելի իջեցնելու կողմը, աննպատակահարմար է:

10. Առաջարկում են վերահսկողության իրավունք տալ
նույնպես խորհրդային բջիջներին, ինչպես վոր այդ տըր-
վում ե արտադրական բջիջներին: Յես կարծում եմ, վոր
այդ առաջարկն անընդունելի յե, վորովհետեւ այն յելում
ե խորհրդային բջիջների զործունեյության յուրահատուկ
պայմանները մոռանալուց:

Թե ինչի յե հասցնում խորհրդային բջիջների գործու-
նեյության յուրահատուկ պայմանների այդ մոռացումը,
ցույց ե տալիս կԱՀՄ Հողգովորմատի և կԱՀՄ Խորհությու-
ժողկոմատի կուսակցական կաղմակերպությունների աշխա-
տանքի փորձը:

Այդ կուսակցական կաղմակերպությունները չեղվել
եյին զեկավարությունների զեկավարության գործունեյու-
թյանը վերահսկելը և ըստ եյության ժողկոմատներում
ստեղծել եյին մի յերկրորդ կենտրոն, վորը կասլվում եր
պերիֆերիայի հետ, դիրեկտիվներ եր տալիս նրան և այն:
Երբեք, նայեցնեք թեկուղ այն հարցերին, վոր քննարկում են
այդ կուսակցակերպությունները: Հողգովորմատի կուս-
ակղմակերպությունը քննարկում եր կԱՀՄ-ում ցանքի ու-
նեցած ընթացքի՝ հարցը: (Ծիծաղ): Զե վոր սա կոմիկա-
կա՞ն է: Կարծես թե նա կարող ե այստեղից հաշվի առնել,
թե ցանքի ընթացքի ուղղությամբ ինչ ե կատարվում ինչ-
վոր մի տեղ՝ կուրանում, Միջին Ասիայում, և տալիս ե
«դիրեկտիվներ»: Գննարկում ե բերքահավաքի կամպանիա-
յին նախապատրաստվելու, ՄՏԿ-ները վառելիքով ապահո-
վելու, ՄՏԿ-ների նորմալ Փինանսավորման հարցերը և այլն
և այն, այսինքն՝ փորձում ե կրկնել և փոխարինել ժող-
կոմատին: Այդ գործից վոչ մի կարգին բան չի ստացվի:

Խորհությունների կուսակցակերպությունը քննար-
կում եր Սրեւելքի խորհութեասություններում խոտհնձի ըն-
թացքի հարցերը (Ծիծաղ): Ի՞նչ կարող ե նա ասել այդ
հարցի վերաբերյալ: Նա փորձում ե նույնպես «դիրեկ-
տիվներ» տալ:

Փոխանակ պայքար կաղմակերպելու հանուն կուսակցա-
կան ու պետական կարգապահության, հանուն կառավարա-
կան դիրեկտիվների կատարումն ինչպես հարկն և ստուդե-
լու, հանուն ապահովության վիճակի, նրա աշխատողների գոր-
ծարար ու քաղաքական հատկության, փոխանակ ահաղան-
գելու ժողկոմատի ապահովության մեջ յեղած թե-
րությունների մասին,—փոխանակ դրան, մարդիկ փորձում
են փոխարինել ժողկոմատի զեկավարությունը, զեկավա-
րել պերիֆերիան:

ՄԵՆՔ այստեղ գործ ունենք արատավոր պրակտիկայի հետ, վորը չի կարելի խրախուսել: Այդ՝ խորհրդային բջիջի խնդիրների մասին տարրական հասկացողությունները շփոթելու մի նմուշ ե: Այդ՝ ղեկավարության պարողիա յեւ, ժողկոմատի մեջ ժողկոմատ ստեղծելու մի փորձ:

Խորհրդային բջիջների գործունեյության սպեցիֆիկան նրանում ե կայանում, վոր նրանք չեն կարող իրենց վրա վերցնել խորհրդային հիմնարկի աշխատանքին ըստ եյության վերահսկելու ֆունկցիան,—դրա համար կան վերադաս կուսակցական և խորհրդային ինստանցիաներ:

Բայց դա չի նշանակում, վոր խորհրդային հիմնարկների սկզբնական կուսակզմակերպությունները հնարավորություն չունեն աղղելու գործի վրա: Ընդհակառակը, խորհրդադային կուսակզմակերպությունների գերը բացառիկ կերպով կարեոր ե: Յեթե հիմնարկի կուսակզմակերպությունը ժամանակին նկատում ե հիմնարկի աշխատանքի մեջ յեղած անկանոնությունները—որինակ, թե ինչ վիճակումն ե աշխատավորների բողոքների ու դիմումների քննումը, այսելուների ընդունելությունը (իսկ այս հարցերը չափազանց սուր նշանակություն ունեն խորհրդային հիմնարկների աշխատանքում), աշխատանքային կարգավահությունը, ամպարատի աշխատանքը և այլն,—յեթե խորհրդային բջիջն այդ թերությունների մասին ահաղանդում ե Համկ(բ)կ կենտկոմին և ժողկոմատի ղեկավարությանը, ապա դրանով իսկ նա կատարում ե պետական ապարատի բարելավման կարեվորույն գործ:

11. Առաջարկում են թույլատրել, վոր բյուրո կազմակերպի այն սկզբնական կուսակցական կազմակերպություններում և ցեխային կուսակցական կազմակերպություններում, վորոնք ունեն 10 կամ 7 անդամ:

7 մարդն ընտրում են 3 մարդուց բազկացած բյուրո: Այդ կնշանակեր կուսակցական կազմակերպության ընդհանուր ժողովը փոխարինել բյուրոյի ժողովով, վորը սիալ ե:

Սրանք են այն առաջարկներն ու ունեն կանոնադրության հետ, բայց, իմ կարծիքով, անընդունելի յեն:

Անցնեմ այն առաջարկներին, վորոնք, իմ կարծիքով, ընդունելի յեն:

1. Մի շարք ընկերներ մատնանշում են, վոր անհրաժեշտ և Համկ(բ)կ կանոնադրության ներածական մասը վերամշակել յերկրի փոփոխված իրադրությանը համապատասխան:

Յես կարծում եմ, վոր այդ առաջարկը ճիշտ ե և այն անհրաժեշտ և ընդունելի:

2. Դիսկուսիայի ժամանակ կարծիքների չափաղանց աշխուժ փոխանակություն կատարվեց համակրողների խմբերի հարցի շուրջը: Դատելով ըստ առավել տարածված կարծիքների, համակրողների խմբերն անհրաժեշտ և վերացնել:

Ընկերները մատնանշում են, վոր կուսակցության շուրջը անկուսակցական ակտիվի վիճակարի աճման պայմաններում, կուսակցության մեջ ընդունելությունը վերսկսելու պայմաններում համակրողների խմբերն արդեն դադարել են իրենց գերը խաղալուց: Կուսակցության մեջ ընդունելությունն ընթանում է հիմնականում համակրողների խմբերի կողքով: Այդ մասին և խոսում, որինակ, այն փաստը, վոր վերջին յերկու տարվա ընթացքում նոր թեկնածու ընդունվածների թվում համակրողները կազմում են միայն 21 տոկոս:

ՄԵՆՔ պարտավո՞ր ենք հաշվի առնել այս պրակտիկ փորձը: Յես դտնում եմ, վոր պարտավո՞ր ենք:

Կուսակցության շուրջը կան մեծ քանակությամբ կազմակերպություններ, վորոնք կուսակցությանը կատարված մասաների հետ: Յես նկատի ունեմ այնպիսի մի կազմակերպություն, ինչպես պրոֆեսիոնալ միությունները, վորոնք պետք ե իրենց անդամներին դաստիարակելու իրենց աշխատանքի հետևանքով պրոֆեսիոնալ միությունների անդամների մակարդակը բարձրացնեն մինչև կոմունիստական ավանդարդի խնդիրների ըմբռնման մակարդակը, այսինքն՝ կուսակցականության մակարդակը և իրենց լավագույն մարդկանց պատրաստեն կուսակցության մեջ ընդունելու համար:

Մեր պրոֆեսիությունները, դժբախտաբար, բախտաբար

չափով չեն դնում իրենց առջև այդ խնդիրը, մինչդեռ
պրօֆմիություններում աշխատող կոմունիստների ուղղակի
խնդիրն ե՝ պրօֆմիութենական կազմակերպություններում
գաստիարակչական աշխատանքը տանել այն հաշվով, վոր
այդ աշխատանքի հետեանքով վերին խավը, միություննե-
րի ակտիվը հասցվի կուսակցականության մակարդակին:

Մենք ունենք զանազան հասարակական կազմակերպու-
թյունների ճյուղավորված սխման—խորհուրդներ, կոմի-
տեմիություն, կոոպերացիա, Պաշտամվիաքիմ և այլն, վո-
րոնց շուրջը կա անկուսակցական լայն ակտիվ, վորից մենք
կարող ենք ջոկել լավագույն մարդիկ՝ կուսակցության մեջ
ընդունելու համար:

Այս տեսակետից համակըրողների խմբերը նեղացնում են
բանվոր դասակարգի, կոլտնտեսային դյուղացիության և
խնելիունցիայի լավագույն մարդկանց կուսակցության մեջ
ընդունելու համար նախապատրաստելու հնարավորու-
թյունները:

Յես գանում եմ, վոր ավելի լավ ե պատրաստված, լա-
վագույն, առաջավոր մարդկանց ընդունել վոչ թե համա-
կրողների խմբերը, այլ ուղղակի կուսակցության թեկնա-
ծու:

3. Առաջարկում են կուսակցությունից սխալ կերպով
վարդապահներին վերականգնելու մասին վորոշումները հրա-
պարակել մամուլում:

Այս լրացումը ճիշտ ե և կարող ե ընդունվել:

4. Առաջարկում են կանոնադրությունից հանել Խոր-
ժըրդային վերահսկողության Հանձնաժողովի մասին կետը
այն կապակցությամբ, վոր կուսկէ-ի աշխատանքի ընույ-
թի փոփոխման վերաբերյալ առաջարկից պետք ե բղիքի նաև
Խվչ-ի գործունեյության ընույթի փոփոխումը և վոր
հական մասին կանոնադրությունն անհրաժեշտ ե հաստա-
տել խորհրդային կարգով:

Յես կարծում եմ, վոր այս առաջարկը ճիշտ ե, քանի
քոր խորհրդային իշխանության մեր որենսդրական ու գոր-
ծադիր որդանների կառուցվածքի մեջ կատարված սահմա-
նադրական փոփոխություններն, անտարակույս, ողահան-

ջում են համապատասխան կորեկտիվներ մտցնել Խվչ-ի
վերաբերյամբ:

5. Այնուհետև, կա ևս մեկ լրացում կանոնադրությա-
նը, վորն անհրաժեշտ ե ընդունել առաջարկում են կանո-
նադրության մեջ վերապահություն անել, վոր կուսակցու-
թյան մեջ ընդունվում են 18 տարեկան դարձած ընկերներ:
(Ծափահարություններ):

6. Մտցված են շատ եյական լրացումներ, վորոնք ան-
հրաժեշտ են համարում կանոնադրության մեջ ավելի
ստույդ կերպով վորոշել կոմյերիտամիությանը վերաբերող մի
շարք հարցեր: Մեր կանոնադրության մեջ կոմյերիտմիու-
թյան հարցերն անբավարար չափով են արտացոլված: Կա-
նոնադրության մեջ կոմյերիտմիության մասին կա յերեք
կետ: Առաջին կետը վերաբերում է նրան, վոր 20 տարեկան
հասակից յերիտասարդությունն ընդունվում ե միայն կոմ-
յերիտմիության միջոցով: Յերկրորդ կետն այն մասին ե,
վոր կոմյերիտմիության ռայկոմի յերաշխավորությունը
հավասարեցվում է կուսակցության անդամների յերկու
յերաշխավորության, և յերրորդ կետը՝ կուսակցական-
կոմյերիտական խմբակների ստեղծման մասին և այսուղ,
վորտեղ չկան սկզբանական կուսակցմակերպություններ:

Կուսակցության և կոմյերիտմիության փոխարարե-
րությունները վորոշող կանոնադրական այս դրույթները
ներկայումս արգեն անբավարար են: Ինձ թվում ե, վոր
անհրաժեշտ ե համագումարի քննարկմանը մտցնել յերկու
այսպիսի դրույթ.

Առաջին այն կոմյերիտականները, վորոնք ընդունվել
են կուսակցության մեջ և կոմյերիտմիության «հրամանա-
տարական» կազմ չեն հանդիսանում, —յես նկատի ունեմ
չարքային կոմյերիտականներին, —սպարտավոր չեն լինել
յիշու կազմակերպության մեջ—կուսակցական և կոմյերի-
տական: Ավելի ճիշտ կլինի, յեթե նրանք, այդ կոմյերի-
տականները, վորոնք կուսակցության հանձնարարությամբ
պատասխանատու աշխատանք չեն կատարում կոմյերիտ-
միության դեկանար որդաններում, լինեն միայն կուսակցա-
կան կազմակերպության մեջ: (Ծափահարություններ):

Պրակտիկան այն ե (և վո՞չ բոլորովին ճիշտ պրակտիկան), վոր մեղանում կոմյերիտմիությունից կուսակցության անդամ սկսում են փոխադրել 25—26 տարեկան հասուկից, այսինքն՝ զվարապես մեծահասակներին: Յեզ այժմ կոմյերիտմիության մեջ ասում են՝ սկզբում կուսակցության մեջ ընդունվելու համար կըոկենք մեծահասակներին, իսկ հետո արդեն կանցնենք ավելի յերիտասարդ կադրերին: Կանոնադրամկան լրացումն այն մասին, վոր յերիտասարգները կուսակցության մեջ կարող են ընդունվել 18 տարեկան հասակից, մեծ նշանակություն կունենա կոմյերիտմիության մեջ դաստիարակչական աշխատանքն ուժեղացնելու համար: «Բասանտարվանները» (ծիծաղ) մեղանում դանվում են ծանր դրության մեջ, վորովհետև նրանց «պահում են» կոմյերիտմիության մեջ և չեն շտապում հանձնել կուսակցությանը, մինչդեռ նրանք ուժերի, առողջության ծաղկման շրջանում դանվող մարդիկ են, ունեն քաղաքացիական բոլոր իրավունքները: Յես կարծում եմ, վոր աննապատակահարմար կլիներ այդ մարդկանց 5—6 ու ավելի տարի պահել կոմյերիտմիության մեջ, դժվարացնելով նրանց ընդունելությունը կուսակցության մեջ:

Այն կոմյերիտականների համար, վորոնք զեկավար աշխատանք չեն կատարում կոմյերիտմիության մեջ և ընդունվել են կուսակցության մեջ, անհրաժեշտ ե թույլատրել լինելու միայն մեկ, այն ե՝ կուսակցական կաղմակերպության մեջ: Այն ժամանակ թե՛ դաստիարակչական, թե՛ կաղմակերպական աշխատանքի դպրոցը նրանք կանցնեն ամբողջապես կուսակցության մեջ: Ինչո՞ւ պետք ե նրանք յենթարկվեն յերկու շրջկոմի, յերկու սկզբնական կազմակերպության: Ինչո՞ւ պետք ե նրանք մտորեն այն մասին, թե վոր խմբակը դնան—կոմյերիտմիության, թե կուսակցական: Ինձ թվում ե, վոր հարկավոր ե պարզ կերպով վորոշել կուսակցական կոմյերիտականների դրությունը: Դու կոմյերիտմիության մեջ անցել ես դաստիարակության նախապատրաստական դպրոցը, դու այժմ արժանի յես լինելու կուսակցության մեջ և քեզ ընդունել են նրա շարքերը: Նշանակում ե՝ դու աշխատում ես նրա կաղմակերպության մեջ: Ինձ

թվում ե, վոր դապարզություն կմտցնի կոմյերիտական տարիք ունեցող կոմունիստների դրության մեջ և միաժամանակ կբարձրացնի կոմյերիտմիության ամբողջ աշխատանքը՝ կուսակցության մեջ ընդունվելու համար լավագույն մարդիկ պատիհարակելու և պատրաստելու ուղղությամբ: (Ծափակարարություններ):

Երկրորդ: Ինձ թվում ե, վոր հասել ե նաև կոմյերիտմիության գերը մեր պետական ու տնտեսական շինարարության մեջ ուժեղացնելու և այդ՝ կուսակցության կանոնադրության մեջ արտացոլելու ժամանակը:

Ընկերնե՛ր, կոմյերիտմիությունը, իր ամբողջ վիթխարի նշանակության հետ միասին, այն ամբողջ վիթխարի ողնության հետ միասին, վոր նա ցույց ե տալիս կուսակցությանը, տառապում ե մեկ թերությամբ, վորի վրա անհրաժեշտ ե հրավիրել թե՛ կոմյերիտմիության և թե՛ մեր կուսակադմակերպությունների ուշադրությունը,—այդ՝ կոմյերիտմիության անբավարար մասնակցությունն ե պետական կյանքին, չափից դուրս մեծ չափով տարվելը ներկոմյերիտական հարցերով:

Մենք պետք ե այժմ գործին նայենք այլ կողմից. յեթե խոսելու լինենք կոմյերիտմիության աղիտացիոն-պրոպագանդիտական աշխատանքի մասին, տպա Համեկ(բ)կ կենտրոնական վերջին վորոշման լույսով միանդամայն ակներեւ և, վոր այդ աշխատանքն զգալի չափով կկատարի կուսակցությունը: Մենք պետք ե այդ տեսակետից ամեն կերպ ողնենք կոմյերիտմիությունը թե՛ կաղըքերով և թե՛ վորձով: Այլապես աներևակայելի յե:

Ներկոմյերիտական աշխատանքը չափաղանց կարևոր գործ ե: Բայց հանուն ինչի՞ պետք ե կատարվի այն: Զե՞ վոր այն չի կարող ինքնանպատակ լինել: Յես կարծում եմ, վոր ամբողջ կոմյերիտական աշխատանքը պետք ե խիստ կերպով ըլքվի դեպի կոմյերիտականներին պետական ու կուսակցական ակտիվ գործունեյության համար, կոմյերիտմիության այն կարևորագույն իննդիրն իրականացնելու համար նախապատրաստելը, վորը կապված ե կուսակցության ոգնականի նրա դերի հետ:

Իսկ այդ ի՞նչ եւ նշանակում պրակտիկորեն։ Պրակտիկորեն այդ նշանակում եւ, վոր, որինակ, վորտեղ չկա սկզբնական կուսկազմակերպություն, բայց կա սկզբնական կոմյերիտական կազմակերպություն, նա պետք եւ իր վրա վերցնի կուսակցական գիրեկտիվների ակտիվ հաղորդիչի գերը։ Ինչո՞ւ նա չի կարող մասնակցություն ունենալ տնտեսական հարցերի քննարկմանն ու լուծմանը։ Ասենք՝ կուտնտեսության վարչության մեջ չկա կարդ ու կանոն, վատ եւ ցանքի վիճակը, վատ եւ աշխատանքային կարդապահությունը, —ինչո՞ւ կոմյերիտական կազմակերպությունը չի կարող քննարկել այդ հարցերը։ Ինչո՞ւ կոմյերիտական կազմակերպությունը չի կարող քննության առնել կոլտնտեսության վարչության վատ աշխատանքի հարցը և գործն այնպես կազմակերպել, վոր վատ վարչությունը փոխարինվի լավով։ Ինչո՞ւ կոմյերիտական կազմակերպությունը չի կարող քննության առնել գյուղարկում յեղած վատ կարդ ու կանոնի հարցը։ Ինչո՞ւ նա չի կարող կուսակցության ըրջկոմի հանձնարարությամբ իր վրա վերցնել կուսակցական հանձնարարությունների, գիրեկտիվների կիրառումը, վորոնք այժմ կատարող չկա միայն այն պատճառով, վոր չկա սկզբնական կուսկազմակերպություն։ Յես կարծում եմ, վոր կոմյերիտական կազմակերպությունը կարո՞ղ եւ և պետք եւ անի այդ։ Կոմյերիտական կազմակերպությունները պետք եւ ունենան նախաձեռնության իրավունք՝ կուսակցական կազմակերպությունների առջև դնելու պետական և տնտեսական աշխատանքի մեջ ու փոքր հարցեր, ձեռնարկության կամ կոլտնտեսության մեջ տնտեսական աշխատանքի բարելավման հարցեր, ստախանովյան շարժման, բաղնիսի վիճակի, ըլացքատան վիճակի, փողոցային յերթեկնության վատ կարգերի, գպրոցում խուլիժանություն անելու հարցեր և այլն, —յես չեմ կրկնի մեր խորհրդային, տնտեսական շինարարության բոլոր մեծ ու փոքր հարցերը։ Այժմ շա՞տ են արդյոք զբաղվում զբանով մեր կոմյերիտական կազմակերպությունները։ Պնդում եմ, վոր քիչ։ Յեթե կոմյերիտական կազմակերպությունները ձեռնամուկ

վինեն այլպիսի հարցերի և քննարկեն վոչ միայն ներկոմյերիտական աշխատանքի հարցերը, վոչ միայն տապակվեն իրենց սեփական հյութի մեջ, ապա զրանով իսկ նրանք դուրս կղան մեր ամբողջ սոցիալիստական շինարարությանն ե՛լ ավելի ակտիվորեն մասնակցելու լայն ճանապարհը։ Կուսակցական և պետական ապաղա դործիչների կազմերի աճումն զգալիորեն կարագանա։ Կոմյերիտականները կըստանան դաստիարակության իսկական դպրոց։ (Ծափահարություններ)։

Դրանից յենելով, յես գտնում եմ, վոր չպետք եւ ընդունել կուսակցական-կոմյերիտական խմբերը լիկվիդացիայի յենթարկելու առաջարկները, վորոնք բղխում են նրանց, վոր այդ խմբերը իրը թե անկենսունակ են։ Դրանք այժմ անկենսունակ են, վորովհետեւ չգիտեն, թե ինչով զբաղվեն։ Յեթե մենք կուսակցական-կոմյերիտական խմբերի աշխատանքի մեջ լցնենք նոր բովանդակություն, յեթե, որինակ, գյուղի կոմունիստները, քանի վոր նրանց թիվը փոքր եւ կուսկազմակերպություն կազմակերպելու համար, և կոմյերիտականները հավաքվեն միասին ու քննության առնեն այն հարցը, թե ինչպես բարելավեն գործը կոլտնտեսության մեջ, ինչուս բարելավեն կուլտուր-քաղաքական աշխատանքը, համաձայնության գան գյուղում քաղաքական, տնտեսական, կուլտուրական աշխատանքի կարեռարդույն հարցերում ընդհանուր վարքաղիծ ունենալու մասին, ապա այդպիսի կուսակցական-կոմյերիտական խմբերն անհրաժեշտ եւ պահպանել, և վոչ թե լիկվիդացիայի յենթարկել։ (Ծափահարությունների պոռքկում)։

7. Հաջորդ առաջարկն այն ե, վոր կուսակցությունից վտարվածից կուստոմը չվերցնեն, մինչև վոր մարզկոմի կողմից հաստատվի վտարումը։ Այդ առաջարկը ճիշտ եւ այն անհրաժեշտ եւ ընդունել։

8. Առաջարկություն յեղավ, վոր քաղկոմների և ըբրգումների պլենումները գումարվեն վոչ սակավ քան մեկ ու կես ամիսը մեկ անգամ։ Այդ առաջարկը ևս նպատակահարմար ձար եւ ընդունել։

9. Առաջարկում եյին, ի փոփոխումն կանոնադրության համապատասխան պարագրաֆի, թույլատրել կուսակցական խմբեր կազմակերպելու նաև այն կուսակցական կազմակերպություններում, վորտեղ 100 կոմունիտ չկա: Ինչպես դուք դիտեք, ըստ կանոնադրության կուսակցական խմբեր կազմակերպվում են միայն այնտեղ, վորտեղ կա 100 և ավելի կոմունիտ: Եես կարծում եմ, վոր այդ առաջարկը նույնպես ընդունելի յե:

10. Առաջարկեց կանոնադրության դարձյալ մեկ փոփոխություն, վորը կայանում են նրանում, վոր կուսակցության մեջ ընդունելիս ընդունվողից չպահանջվի հասարակական կազմակերպությունների կարծիքը: Ինձ թվում ե, վոր այդ առաջարկը նպատակահարմար ե: Կուսակցության մեջ ընդունվելու համար միանդամայն բավարար են կուսակցական ընկերների յերաշխավորությունները:

Սրանք են կանոնադրության վերաբերյալ այն առաջարկներն ու լրացումները, վորոնք նպատակահարմար ե ընդունել:

Ընկերներ, կանոնադրական հարցերի շուրջը ծավալված դիսկուսիան հոկայական ոգուտ բերեց կուսակցությանը: Այն ցույց տվեց կուսակցության բախտի համար կուսակցության անդամների ունեցած պատասխանավորթյան աճումը, իր մայր-կուսակցության մասին յուրաքանչյուր կուսակցականի հոգածարության աճումը: Դիսկուսիան ցույց տվեց մեր կուսակցության անդամների գաղափարական համախմբվածության վիթխարի աճումը:

Իր չափով դիսկուսիան միանդամայն չտեսնված յերեխույթ հանդիսացավ մեր կուսակցության կյանքում: Այն ցույց տվեց, վոր կուսակցությունն ամբողջ թափով առաջ ե դնում գեղի իր շարքերի լիակատար ակտիվացումը, վորը նշանակում ե կուսակցության դործունեյության դեռևս չտեսնված թափ:

ԽՍՀՄ-ը թեակոխել ե զարգացման նոր շրջան, առցիալիզմի կառուցումը ավարտելու և սոցիալիզմից առաջանաբար կոմունիզմին անցնելու շրջանը:

Մեր համաշխարհային-պատմական գործի այս նոր ետապում ե'լ ավելի յե բարձրանում մեր կուսակցության գերն ու նշանակությունը:

Կուսակցության առջև ծառանում են նոր վիթխարի ու դրավիչ հեռանկարներ, ծառանում են նոր մեծ, բարդ խճաղերներ: Այդ խնդիրները լուծելու և կոմունիստական հասարակության կառուցման համար պայքարող առաջավոր մարտիկի իր գերը կատարելու համար մեր կուսակցությունը պետք ե անդուլ կերպով սրի իր կազմակերպական զենքը: Կուսակցության կանոնադրությունը, ընդունված մեր համադումարի կողմից, կլինի հաղթանակած սոցիալիզմի կուսակցության կանոնադրություն, մի կանոնադրություն, վորը կուսակցության անդամներին զինում և աստիճանաբար կոմունիզմին անցնելու խնդիրը հաջող կատարելու համար: (Բուռն ծափահարություններ):

Զինված առաջավոր թեորիայով, զինված ամենաառաջարկոր գաղաքականությամբ, զաղաքականությամբ, կազմակերպությամբ ու իդեոլոգիայով, իր շուրջը համախմբած մեծ բազմամիլիոն խորհրդային ժողովուրդը, մեր կուսակցությունը գնում ե մարտիկ՝ հանուն աստիճանաբար կոմունիզմին անցնելու: (Բուռն ծափահարություններ):

Նեխող կապիտալիզմի ուժերը մե՛կ անդամ չե, վոր փորձել են և կիորձեն կանդնեցնել մեր հաղթական յերթը:

Մենք գիտենք, վոր առջևում կլինին դժվարություններ: Մենք հասկանում ենք մեր առջև դրված նոր խնդիրների բարդությունը: Բայց մենք գիտենք թե՛ միջոցներ թե՛ պայմաններ մեր վերջնական հաղթանակի համար:

Ընկեր Ստալինը դեռ կուսակցության XIX համագումարում առաց, վոր մեր կուսակցությունն անպարտելի յե, յեթե նա չի վախենում դժվարություններից և գիտե, թե ուր պետք ե տանել գործը: Հենց այդպիսի անպարտելի կուսակցությունն է հանդիսանում մեր բոլշևիկյան մեծ կուսակցությունը: (Ամբողջ դահլիճի բուռն ծափահարություններ, բուրը գոտի յեն կանգնում):

Ընկերներ, մենք, պրոլետարական մեծ ստրատեգների բանակի, Լենինի-Ստալինի բանակի մարտիկներս, համա-

իմրլած լենինյան-ստալինյան կենտկոմի շուրջը, մեր ուսուցիչն և առաջնորդ ընկեր Ստալինի շուրջը, փառքով ոծված մեր բոլցելիյան դրոշը կտանենք դեպի կոմունիզմի լիակատար հաղթանակը: (Ամբողջ դահլիճի բուռն ծափահարություններ):

Կեցցե՛ մեր մեծ կուսակցությունը:

Կեցցե՛ բոլցելիյան կուսակցության, ամբողջ խորհրդային ժողովրդի, ամբողջ առաջադեմ առաջավոր մարդկության հանձարը, ուղեղը, սիրաը—մեր Ստալինը: (Բուռն, յերկար ժամանակ չլուս ծափահարություններ, վորօնիք վերածվում են ովացիայի, բոլորը վատիի յեն կանգնում, «ուռա» բացականչություններ):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

62

Ն ե ր ա ծ ո ւ թ յ ո ւ ն	5
Կուսակցության մեջ ընդունելության կատեղորիաները վերացնելու մասին	13
Կուսակցության անդամների իրավունքների մասին	21
Մասսայական զառւմները վերացնելու մասին	25
Կուսակցության ծրադրի յուրացման և ընդունման մասին	41
Ներկուսակցական դեմոկրատիայի մասին	43
Կադրեր ընտրելու, կատարումն սոուզելու, կուսակցական աշխատողների նոր կադրեր առաջ քաշելու մասին	49
Կադրերի թեորիական և քաղաքական հետամնացության լիկվիդացիայի մասին	55
Կուսակցական ապարատը վերակառուցելու և համամիութենական կոնֆերենցիաների մասին	60
Արտադրական և խորհրդային սկզբնական կուսակզմակերպությունների ինսդիբների մասին	63
«Համկ(ր)կ կանոնադրության մեջ կատարելիք փոփոխությունների մասին» գեկուցման թեղիսների շուրջը ծավալված դիսկուսիայի հանրագումարների մասին	72

Հայերեն թարգմանության խմբագիր Տ. Ալեքսանյան
Տեխն. խմբ. Ս. Խաչոստրյան

Սըրագրիչ Հ. Մանվելյան

Կոնտրոլ սրբագրիչ Լ. Արովյան

Դպավական լիազոր Ն 2512, հրատ. Ա 668,

Պատվիր Ա 73, ափբաժ 50.000

Թղթի չափոր $\frac{84}{100} \frac{1}{32}$ (33. 440 տպ. նիշ մեկ տպ. մամալում)

6 տպ. մամուլ 3 թերթ թուղթ

Հանձնված ե արտադրության 1/IV 1939 թ.

Ստորագրված ե ապագրելու 11/IV 1939 թ.

Գինը 50 կ.

Գիտեատ—թաղաքական գրականության

հրատարակության տպարան, Յերևան,

Ալմագերդյան Ա 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0186155

ԳՐԱԼ 50 Կ.

А. ЖДАНОВ
ИЗМЕНЕНИЯ В УСТАВЕ ВКП(б)

Армгиз—Издательство полит. литературы
Ереван 1939